

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	8
2 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.....	11
3 ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ..	13
1. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ 1224-12001	13
2. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ.....	14
3. Նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ.....	16
4. Գյուղատնտեսության խթանման '1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում Պայմանագրով նախատեսված հաշվետվության ներկայացում.....	18
5. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում իրականացվող մոնիթորինգ.....	19
6. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ.....	20
7. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացված գնումների վերաբերյալ.....	22
8. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աշխատակիցներին հաշվարկվող աշխատավարձի վերաբերյալ	23
9. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020թ.-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի և	

տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ.....25

10. 2020թ-ի մարտ ամսին պայմանագրով նախատեսված հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ28

11. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Կոտայքի մարզի Կոտայքի տարածաշրջանին տրամադրված պատվաստանյութերի և իրականացված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների վերաբերյալ.....32

12. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Կոտայքի տարածաշրջանում իրականացված հաշվեքննության վերահաշվարկի ընթացակարգի վերաբերյալ.....33

13. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ.....36

14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման հետ կապված բանկային երաշխիքի վերաբերյալ:....39

15. 1116 Ծրագրի 11003 միջոցառման Պայմանագրով նախատեսված ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ..... 42

16. 1116 Ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող աշխատակիցների վերաբերյալ.....43

4 ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....46

17. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ.....46

18. 1022-11001՝ «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»

շրջանակում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ..... **Error! Bookmark not defined.**

19. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի մարտ ամսին կատարված ախտորոշիչ միջոցառումների վերաբերյալ.....49

20. 1116 Ծրագրի 11001 Միջոցառման շրջանակներում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից բաշխված պատվաստանյութի քանակների վերաբերյալ..... 51

21. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակներում Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված մեկ փորձաքննության ինքնարժեքի հաշվարկի վերաբերյալ.....54

22. 1116 Ծրագրի 11003 Միջոցառման շրջանակներում Ռոզ-Բեենգալ հակաձնի /անտիգեն/ բաշխման, օգտագործման և մնացորդների վերաբերյալ մարզային կառույցներից ներկայացված հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ.....57

23. 1116 Ծրագրի 11003 Միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ում 01.01.2021թ. դրությամբ հակաձնի մնացորդների վերաբերյալ68

5 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ71

24. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր մոնիթորինգի վերաբերյալ.....71

25. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր Վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ.....72

26. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ.....76

27. 1116 ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ընթացքում կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ախտորոշման հակահամաճարակային միջոցառումների կատարման վերաբերյալ.....**Error! Bookmark not defined.**

28. Ռոզ-Բենգալ հակաձնի բաշխման վերաբերյալ.....78

6 ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 81

7 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ 104

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 23-Ա որոշում

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի ապրիլի 9-ի թիվ 91-Ա որոշում

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք,
 2. ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,
 3. «Գնումների մասին» ՀՀ օրենք,
 4. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշում,
 5. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,
 6. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
 7. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
 8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն,
 9. ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի միջև 2020 թվականի փետրվարի 25-ի թիվ 49-20 պայմանագիր
- 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

Հաշվեքննության կատարման ժամկետը

2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղղեցույցի համաձայն:
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի
երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակար-
գում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՖԿ** Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները:
- ԳՖԿ** Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը:
- ՀԱԲԼԾԿ** «Հայաստանի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ:
- ԳԾԿ** «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

1 ԱՄՓՈՓԱԳԻՐ¹

2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության տարեկան բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ:

Հաշվեքննիչ պալատը 2020 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվոքննություն է իրականացրել: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա կազմվել են արձանագրություններ և ընթացիկ եզրակացություններ:

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննություն:

Հաշվեքննության օբյեկտի կողմից հիմնականում ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են:

1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մասով առկա է անհամապատասխանություն մոնիթորինգի իրականացման վերաբերյալ:

1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում առկա են խեղաթյուրումներ և հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված աշխատավարձի ֆոնդի բաշխման հետ, անհամապատասխանություններ թափուր հաստիքների չհամալրման մասով: Արձանագրվել է նաև ներքին աուդիտի գործառույթի, ըստ էության, բացակայություն:

1022-11001 «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» մասով առկա են անհամապատասխանություններ կապված գնումների գործընթացի կազմակերպման, մոնիթորինգի իրականացման հետ:

¹ Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության ղեկքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ:

1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ոլորտում առկա են հսկողության գործընթացների թերացումներ կապված նախատեսված և արդյունքային ցուցանիշների անհամապատասխանությունների հետ, ինչպես նաև առկա են խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ իրականացված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների մասով:

1116-11003 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների գծով առկա են հսկողության գործընթացների թերացումներ՝ կապված ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի փաստացի արդյունքային ցուցանիշների անհամապատասխանությունների հետ, ինչպես նաև առկա են խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ մարզային կառույցների հաշվետվությունների մնացորդների և փաստացի օգտագործված անտիգենի հետ:

1224-11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման ոլորտում առկա են խնդիրներ տեղեկատվություն տրամադրելու հետ: Մասնավորապես, ՀՀ-ում գործող և որպես մեկուսացման վայրեր օգտագործված հյուրանոցների /հյուրատներ և այլն/ մասին տեղեկությունները:

1022-12001 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տրոսադրույքների սուբսիդավորման ոլորտում առկա է հսկողության գործընթացների թերացում կապված նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ, մասնավորապես վարկերի օգտագործման նպատակայնության դեպքերի հետ:

Տարեկան հաշվեքննության շրջանակում նաև ուսումնասիրվել են այն անհամապատասխանությունները, խեղաթյուրումները և հսկողության գործընթացների թերացումները (այլ փաստեր), որոնք արձանագրվել էին իննամիսների հաշվեքննության շրջանակներում: Վերջիններիս վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են սույն հաշվետվության V «Հետհսկողական գործընթաց» մասում: Սակայն այն հարցերը, որոնց գծով չեն կատարվել հաշվեքննության օբյեկտի կողմից գործընթացներ, ի համեմատ վերջիս կողմից նախանշված ժամանակացույցի, կամ այն հարցերը, որոնք ընդհանրապես մերժվել են հաշվեքննության օբյեկտի կողմից, ներառվել են սույն հաշվետվության համապատասխանաբար 3«Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ», 4 «խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ» և 5

«Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր» մասերում՝ այդ հարցերը տարբերակելով «կրկնկվող կետ» վերնագրերով:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 14-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 15-21-րդ կետում, որը համատարած չի, սակայն էական է ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Կարեն Առուստամյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
2021 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

2 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2020 թվական

հազ.դրամ

Ծրագիր		Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Ֆինանսավորում	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴԱՄԵՆԸ		28,518,157.20	31,266,090.71	25,302,773.14	24,668,045.72	24,745,712.41
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	40,608.00	29,712.00	29,712.00	29,712.00
1022	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	4,049,939.10	6,315,949.10	5,954,096.00	5,951,119.04	5,951,119.04
1026	Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ	190,842.90	75,825.00	70,522.41	70,522.41	70,522.41
1058	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,394,437.30	2,173,262.39	2,056,154.49	2,046,486.17	2,066,564.00
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	515,387.20	281,798.50	273,260.43	272,778.22	255,270.23
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում	30,803.40	27,002.20	27,002.16	27,002.16	27,002.16
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	4,225,163.50	3,525,685.20	1,360,087.40	1,413,984.66	1,371,762.53
1104	Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը	183,120.00	233,120.00	160,092.52	160,092.52	185,092.52
1116	Անասնաբուժական ծառայություններ	2,616,199.40	1,874,032.90	1,739,352.21	1,739,352.21	1,775,783.45

1134	Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն	1,896,310.80	995,170.20	1,880,189.30	676,059.59	573,828.97
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	210,156.20	278,156.20	278,156.20	278,156.20	265,960.60
1165	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	1,395,020.00	607,931.82	607,931.82	607,931.82	959,784.02
1187	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	4,506,884.40	1,857,010.30	1,218,931.13	1,218,890.33	1,213,174.40
1190	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	6,303,893.00	2,589,660.00	1,686,068.21	2,231,219.72	2,241,160.63
1224	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	-	10,260,978.90	7,866,088.86	7,849,610.67	7,662,110.67
1230	Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	-	129,900.00	95,128.00	95,128.00	91,534.00
8992	Նախորդ տարիների դեբիտորական և/կամ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-	5,330.78

3 ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ 1224-12001

Առկա է անհամապատասխանություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկային կազմակերպությունների (Այս գլխում այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի պահանջների մասով, ըստ որի միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը, սակայն այն փաստացի չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի կադարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (Այս գլխում այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 3,500,000.00 հազ. դրամ: 2020 թվականի տարեկան դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 2,318,075.4 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 31-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին, երկրորդ եվ երրորդ

միջոցառումների շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգերը հաստատելու մասին» (այսուհետ՝ Կարգ) թիվ N 416-Լ որոշմամբ,

- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետեվանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» (այսուհետ՝ Որոշում) թիվ N 355-Լ որոշմամբ,
- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ Էկոնոմիկայի Նախարարություն և այսուհետ՝ Ֆինանսական կառույց միջև կնքված Պայմանագիր:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու որևէ կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Համապատասխան միջոցառումների ծրագրերով նախատեսված մոնիթորինգի աշխատանքների իրականացումը լինելով բավականին ծավալուն, պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ: Ներկայումս նախարարությունում քննարկվում է այս ծրագրերով մոնիթորինգի իրականացման աշխատանքների հնարավոր ձևաչափը և իրականացման մոտեցումները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հարցը կուսումնասիրվի Էկոնոմիկայի նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում:

2. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ

Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության

պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի կարարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 փնտեսագիտական հողվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,879,102.30 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,829,157.14 հազ. դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2020թ. կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 08.01.2020թ. դրությամբ նախատեսվում է 446 հաստիքային միավոր, որից 75-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 16%: 01.12.2020թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը կազմում է 449, որից 95-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 21%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 08.01.2020թ. դրությամբ 75 թափուր հաստիքներից 61-ը 01.12.2020թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:

Համաձայն հաշվեքննության օբյեկտի տրամադրած տեղեկատվության, 2020թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ընդունվել թվով 49 աշխատակից և ազատվել է 76 աշխատակից: Ավելին, համեմատելով հաստիքացուցակով հաստատված պաշտոններ զբաղեցնողներին և «ՀԾ-հաշվապահ» ավտոմատացված հաշվապահական ծրագրից հունվար-դեկտեմբեր ընդլայնված շախմատաձև հաշվետվություններում պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների հետ, պարզվել է, որ ընդունվածների ցանկում առկա են արտահաստիքային կարգով աշխատանքի ընդունված աշխատակիցներ, այն դեպքում երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է եղել թափուր հաստիք նույն պաշտոններով՝

- Իրավախորհրդատու նախարարի,
- Խորհրդական մասնագետ

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նշված թվով 9-ը արտահաստիքային աշխատանքային պայմանագրերից 7-ը ներկայումս լուծված են: Մնացած 2-ի՝ ձեռներեցության զարգացման վարչության մասնագետի և գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի հետ կնքված աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգվել են համապատասխանաբար մինչև 2021 թվականի մարտի 31-ը և դեկտեմբերի 30-ը:

Չնայած այն հանգամանքին, որ նախարարության հաստիքացուցակում առկա է կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի թափուր հաստիքներ, սակայն հաշվի է առնվել, որ նշված պայմանագրով սահմանված գործառույթները պետք է իրականացվեն որոշակի ժամանակահատվածում և նպատահարմար է համարվել կնքել որոշակի ժամկետով պայմանագիր:

Արտահաստիքային «մասնագետ»-ի հետ պայմանագիրը կնքվել է որոշակի ժամկետով՝ քաղաքացիական աշխատանք իրականացնելու համար, իսկ նախարարության հաստիքացուցակում առկա պաշտոնները քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին:

3. Նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն որի հանրային հարվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը, ինչը չի իրականացվել:

Կրկնվող կետ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի (Այս գլխում այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձանցից ընտրության միջոցով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականին Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի բաժնի գործունեության դադարեցման գործընթացը իրականացվել է անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից՝ ՀՀ վարչապետի 06.12.2019 թ. թիվ 1827-Լ որոշման համաձայն՝ (Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 09.03.2020թ.թիվ 352-Ա հրաման):

Այսուհետև ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է պայմանով մրցույթ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:

Ընտրված մասնակցին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով ամրագրված դրույթներին համապատասխան պայմանագրի նախագիծը, որը հաղթող մասնակցի կողմից չի ստորագրվել, հետագայում բողոքարկվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը՝ գնման գործընթացը կասեցված էր:

2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 03.11.2020թ. թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/115 ծածկագրով բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայն որի հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը, ինչը չի իրականացվել:

4. Գյուղատնտեսության խթանման `1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում Պայմանագրով նախատեսված հաշվետվության ներկայացում

Առկա է անհամապատասխանություն թիվ 49-20 պայմանագրի 2.1.2 կետով սահմանված պահանջի մասով, համաձայն որի կազմակերպությունը պարտավորվում է հաշվետվությունը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թ. մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ծև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային):

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի կարարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1022 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հարկացնել 261,500.00 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 240,648.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 237,698.95 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 237,698.95 հազ. դրամ:

Հիմք ընդունելով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշումը, «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» ծրագիրը (Այս գլխում՝ Ծրագիր)՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (Այս գլխում այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2020 թվականի փետրվարի 25-ին կնքվել է թիվ 49-20 պայմանագիրը (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետը սահմանում է, որ Նախարարությունը պարտավորվում է 2020թ. Ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամին հատկացնել որոշմամբ նախատեսված մինչև 300,000.00 հազ. դրամ գումար 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Պայմանագրի 2.1.2 կետով սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թ. մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային) հաշվետվության տեքստային մասի ներկայացում, սակայն ներկայացված հաշվետվությունում Հ-4 հաշվետվությունը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ընդունվել է ի գիտություն:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանությունը:

5. Գյուղատնտեսության խթանման՝ 1022 Ծրագրի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման»՝ 11001 միջոցառման շրջանակներում իրականացվող մոնիթորինգ

Առկա է անհամապատասխանություն թիվ 49-20 պայմանագրի 3-րդ կետով սահմանված դրույթների մասով, համաձայն որի Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ:

Կրկնվող կետ

Հիմք ընդունելով «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» ծրագիրը՝ Նախարարության և Հիմնադրամի միջև կնքված Պայմանագրով նախատեսվում է, որ Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից նախատեսված մոնիթորինգը չի իրականացվել: Այսպիսով արձանագրվել է անհամապատասխանություն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված դրույթների մասով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ընթացքի մեջ է:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել է անհամապատասխանությունը:

6. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ձեռքբերվող տաղավարի կառուցապատման աշխատանքների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության, 56-րդ կետի 6-րդ ենթակետի, 32-րդ կետի 5-րդ ենթակետի, 114 կետի 2-րդ ենթակետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին դրույթների հետ:

Կրկնվող կետ

1022-11001 ծրագրի իրականացման շրջանակներում, 2020 թվականի մարտի 17-ից 19-ն ընկած ժամանակահատվածում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում նախատեսված է եղել Հիմնադրամի մասնակցությունը Prowein 2020 գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսին: Սակայն COVID-19 համավարակի պատճառով այն չեղարկվել և տեղափոխվել է 2021 թվականի մարտի 21-ից 23-ը:

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ 49-20 Պայմանագրի Հավելված 2-ով ներկայացված Նախահաշվով նախատեսված է 40,500.0 հազ. դրամ՝ ցուցահանդեսի ընդհանուր ծախսերի համար, սակայն առաջին եռամսյակում ծախսերի կատարման հայտում նախատեսված գումարը կազմում է 26,800.0 հազ. դրամ: Փաստացի ծախսվել է 16,386.0 հազ. դրամ՝ տաղավարի նախագծի, կառուցապատման, կահավորման նպատակով:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ P7\04-02\20 պայմանագիրը «Рест7Арт» ՍՊԸ-ի հետ՝ Prowein Dusseldorf գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար: Ընկերությունը գրանցված է որպես իրավաբանական անձ Ռուսաստանի Դաշնությունում:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Գնումների օրենսդրության հետևյալ կետերի հետ.

1. «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (Այս գլխում այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի (ե) պարբերության համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման եւ դրա առավելագույն չափը, որը Հիմնադրամի կողմից չի կատարվել:

2. Հիմնադրամի կողմից Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման, որը չի համապատասխանում Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջին:

3. Հիմնադրամը պայմանագրով սահմանել է 50% կանխավճար, որը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված

պահանջին, համաձայն որի՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը:

4. Հիմնադրամը կնքել է պայմանագիր, որը չի համապատասխանում Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն²:

7. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացված գնումների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այս գլխում այսուհետ՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի հետ:

Կրկնվող կետ

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «...հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև

² Հիմնադրամի կողմից արձագանքը եղել է վեց ամիսների հաշվեքննության արդյունքի մասով:

գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:», սակայն հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020թ. ընթացքում Հիմնադրամի կարիքների համար մեկ անձ գնման ընթացակարգով կնքված 29 պայմանագրերի ընթացակարգերը ամբողջությամբ չեն իրականացվել Կարգի պահանջների հետ: Մասնավորապես՝ պայմանագրերի կնքելու և կնքված պայմանագրերի հայտարարությունները չեն հրապարակվել ռուսերեն լեզվով:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ուսումնասիրելով տվյալ նկատառումը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված դրույթները, հարկ ենք համարում նշել, որ դիտարկումն ընդունվել է ի գիտություն և ենթակա է վերանայման:³

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Վեց ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը Նախարարության կողմից ընդունվել է: **Նախարարության բյուջեի կատարման տարեկան հաշվեքննության ընթացքում արձանագրվել է նույն բացթողումը:**

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հետամուտ լինել Հիմնադրամի կողմից կազմակերպվող գնումների գործընթացին:

8. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի աշխատակիցներին հաշվարկվող աշխատավարձի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև:

³ Հիմնադրամի կողմից արձագանքը եղել է վեց ամիսների հաշվեքննության արդյունքի մասով:

Կրկնվող կետ

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020թ. Հիմնադրամի հաստիքացուցակը ձևավորվել է 2020թ. փետրվարի 26-ին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ միաձայն: Մինչ այդ աշխատակիցները աշխատել են նախկինում ձևավորված հաստիքացուցակի համաձայն, սակայն չեն վճարվել: Հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Սակայն Հիմնադրամի աշխատակիցները 2020թ.-ի հունվար-մարտ ամիսների աշխատավարձը ստացել են 2020թ. ապրիլ ամսին: Նշվածը Հիմնադրամի կողմից պատճառաբանվել է ֆինանսավորման ուշ ստացմամբ: Սակայն, հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը Նախարարությանը ծախսերի կատարման հայտ է ներկայացրել 2020թ. փետրվարի 26-ին, իսկ ֆինանսավորվել է 2020թ. մարտի 3-ին:

Ի լրումն՝ Հիմնադրամը նաև ուշ է վճարել աշխատակիցների աշխատավարձից պահված եկամտային հարկից գոյացած իր պարտավորությունը, ինչի արդյունքում հաշվարկվել տույժ է 221.98 հազ. դրամի չափով:

Հիմնադրամի կողմից ներկայացված բանկային քաղվածքի համաձայն՝ ընթացիկ հաշիվների մնացորդը 31.12.2019թ. դրությամբ կազմում են՝ 17,300.48 հազ. դրամ և 27,914.13 Եվրո, ընդ որում Հիմնադրամի հունվար ամսվա աշխատավարձի փաստացի ծախսը կազմել է 4,287.77 հազ.դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2020թ մարտի 23-ի N 381 – Ա որոշմամբ, որից հետո 2020թ մարտի 26-ին հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշմամբ հաստատվել է հիմնադրամի 2020թ բյուջեն, այդ թվում՝ հաստիքացուցակը և տարեկան աշխատավարձի ֆոնդը, ինչից հետո վճարվել է հունվար – մարտ ամիսների աշխատավարձը: Օրենսդրության համաձայն՝ հիմնադրամը նաև վճարել է հարկային պարտավորությունները: Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձը վճարվում է պետական բյուջեի միջոցներից և ենթակա չէ այլ աղբյուրներից ֆինանսավորման: Հարկ ենք համարում նշել, որ աշխատավարձի վճարումն իրականացվում է միայն հոգաբարձուների խորհրդի տարեկան աշխատավարձի

Ֆոնդի հաստատումից հետո, իսկ վճարման ուշացումը պայմանավորված է խորհրդի անհատական կազմի հաստատման աշխատանքների երկարաձգմամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության կողմից ընդունվել է արձանագրված բացթողումը:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն Հիմնադրամի կողմից աշխատակիցների վճարման գործընթացի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև:

9. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020թ.-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի և տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ-ի թիվ 5-Ն հրամանի պահանջների հետ, որով հաստատվել է ՀՀ բյուջեյային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի տարեկան կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2020 թվականի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,082,553.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,040,077.32 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,039,403.98 հազ. դրամ:

Նախարարության և ԳԾԿ միջև 2020 թվականի ապրիլի 6-ին կնքվել է թիվ 80-20 պայմանագիրը՝ (այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր) հիմք ընդունելով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019

թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշումը:

Պայմանագրով, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» 11001 միջոցառման շրջանակներում, նախատեսվել է տրամադրել մինչև 1,121,273.10 հազ. դրամ: 2020 թվականի ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվել է, կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 12 հիվանդությունների նկատմամբ, իրականացնել 8,322,498 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ: Նշված աշխատանքներն իրականացվել են ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում՝ ԳԾԿ-ի 38 համաճարակաբանների և անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած մոտ 515 անասնաբույժների միջոցով: Ծրագրի ծախսերի նախահաշվով, վերը նշված գումարը նախատեսվել է համաճարակաբանների և անասնաբույժների աշխատավարձերի վճարման համար:

Պայմանագրում, 2020 թվականի հոկտեմբերի 22-ին, կատարվել է փոփոխություն, որի շրջանակում կնքվել է համաձայնագիր (այս գլխում այսուհետ Համաձայնագիր): Ըստ Համաձայնագրի, Պայմանագրի ընդհանուր գումարը նվազեցվել և կազմել է 1,082,553.10 հազ. դրամ, իսկ ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումները՝ 7,710,364 հատ:

Ծրագրի ծառայությունների մատուցման գործառույթներն իրականացվել են անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած անասնաբույժների և աշխատանքային պայմանագրեր կնքած համաճարակաբանների միջոցով:

Սկսած 2020թ-ի ապրիլի 6-ից, Ծրագրով նախատեսված անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման նպատակով, ԳԾԿ-ի կողմից կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր մոտ 515 անասնաբույժների հետ՝ առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ:

Նույն ժամանակահատվածում, թվով 38 տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Պայմանագրերի 2.5. կետով աշխատանքի կատարման վերաբերյալ պետք է

ներկայացվելին ամենամյա հաշվետվություններ: Առկա է անհամապատասխանություն համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի 2.5. կետով սահմանված պահանջների հետ, 2020 թվականի ընթացքում աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվություններ չեն ներկայացվել:

Ըստ ԳԾԿ-ի 2020 թվականի համար հաստատված նախահաշվի անասնաբույժների և համաճարակաբանների աշխատավարձերը նախատեսվել և վճարվել են տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածով, սակայն նախահաշվով որպես ծառայությունների ձեռք բերում և վճարումը պետք է կատարվեր համապատասխան տնտեսագիտական դասակարգման հոդվածից: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ-ի թիվ 5-Ն հրամանի պահանջների հետ, որով հաստատվել է ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Առկա իրավիճակը բխում է մի շարք խնդրիներից՝ համայնքներում անասնաբույժ մասնագետների 60-70 %-ի տարիքային շեմը գերազանցում է 60 տարեկանը, անասնաբուժական մասնագիտական մասնավոր կազմակերպությունները բավարար բաշխավածություն չեն կարող ապահովել ծրագրի միջոցառումների կատարումն ապահովելու համար, համայնքներում երիտասարդ մասնագետների համար ոլորտը գրավիչ չէ, քանի որ տվյալ գործունեությունը չի համարվում մասնագիտական ստաժ, ամեն ամիս չեն վարձատվում, ընդ որում սահմանված միավորի գինն առաջացնում է դժգոհություն:

Տեղեկացնում եմ, որ առկա հարցը բազմիցս քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, որի ուղղությամբ աշխատանքեր են տարվում:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ըստ էության արձանագրված անհամապատասխանությունները հաշվեքննության օբյեկտի կողմից ընդունվել են և դրանց վերաբերյալ տրվել են որոշ պարզաբանումներ:

Եզրակացություն

ԳԾԿ-ի կողմից 2020 թվականի ընթացքում մոտ 515 անասնաբույժների հետ առանց մրցույթի կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ:

Անասնաբույժների և համաճարակաբանների աշխատավարձերը նախատեսվել և վճարվել են տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածով, սակայն նախահաշվով որպես ծառայությունների ձեռք բերում և վճարումը պետք է կատարվեր համապատասխան տնտեսագիտական դասակարգման հոդվածից: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ-ի թիվ 5-Ն հրամանի պահանջների հետ, որով հաստատվել է ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը նշված հարցի վերջնական լուծումը իրականացնել օրենսդրական փոփոխությունների միջոցով:

10. 2020թ-ի մարտ ամսին պայմանագրով նախատեսված հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն 2020 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի կնքման ժամկետի և կատարվելիք միջոցառումների և դրանց հետ կապված վճարումների միջև կամ 2020 թվականի մարտ ամսին հակահամաճարակային միջոցառումներ չպետք է նախատեսվեին, քանի որ պայմանագիրը կնքվել է ավելի ուշ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված, այն է. «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»:

Առկա է անհամապատասխանություն դրամաշնորհի պայմանագրի 4.2. կետի պահանջների հետ, այն է. «Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի

հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր»: Այսինքն, ըստ պայմանագրի, ԳԾԿ-ն իրավունք չունի մարտ ամսին կատարված աշխատանքները ներկայացնել 2020 թ-ի ապրիլ ամսին և վճարվել դրա համար:

Համաձայն Նախարարության և ԳԾԿ-ի միջև 2020 թվականի ապրիլի 6-ին կնքված թիվ 80-20 պայմանագրի, 2020 թվականի առաջին եռամսյակում, ոչ ֆինանսական /արդյունքային/ ցուցանիշների կատարման ժամանակացույցով նախատեսվել է կատարել 706,254 ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսվել է 361,530.7 հազ. դրամ: **Առկա է անհամապատասխանություն 2020 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի կնքման ժամկետի և կատարվելիք միջոցառումների և դրանց հետ կապված վճարումների միջև կամ 2020 թվականի մարտ ամսին հակահամաճարակային միջոցառումներ չպետք է նախատեսվեին, քանի որ պայմանագիրը կնքվել է ավելի ուշ:**

Պետք է նշել, որ ԳԾԿ-ն ստեղծվել է ՀՀ կառավարության 30.01.2020 թվականի թիվ 79-Ն որոշմամբ, իսկ որոշումը ուժի մեջ է մտել 06.02.2020 թվականից:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 18.03.2020թ. թիվ 394-Ա հրամանով, 2019 թվականի ընթացքում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» և «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրերի շրջանակներում ձեռք բերված անասնաբուժական դեղամիջոցները, անասնաբուժական միջոցները և թունանյութերը հանձնվել են ԳԾԿ-ին և կատարվել է դրանց բաշխման աշխատանքները: 19.03.2020 թվականի թիվ 1 բաշխման ցուցակի համաձայն, որը հաստատվել է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից, ԳԾԿ-ին հանձնված 4 անվանում պատվաստանյութերը, ախտահանիչները, ասեղները և փորձանոթները՝ գումարով 49,582.00 հազ. դրամ, տարածաշրջանային համաճարակաբանների միջոցով 20.03.2020թ.-26.03.2020թ. ընկած ժամանակահատվածում բաշխվել են համայնքները սպասարկող անասնաբույժներին: Պետք է նշել, որ տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանները և անասնաբույժները ԳԾԿ-ում աշխատանքի են ընդունվել միայն 2020 թվականի ապրիլի 6-ից սկսած, կամ նախարարի հրամանով պատվաստանյութերը հանձնվել են մարդկանց, որոնք որևէ պայմանագրային պարտավորություններ չունեն ԳԾԿ-ի նկատմամբ և չէին հանդիսանում նյութական պատասխանատու անձիք: **Առկա է**

անհամապատասխանություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված, այն է. «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»:

2020 թվականի մարտ ամսին անասնաբույժներին բաշխված պատվաստանյութերը հիմնականում ծախսվել են նույն ամսին, որի վերաբերյալ առկա են անասնաբույժների կողմից կազմված և համաճարակաբաններին ներկայացված կատարողական ակտեր: Սույն ակտերը ամփոփվել և ներկայացվել են 2020 թվականի ապրիլ ամսին կազմած ամփոփ-հաշվարկների ակտերում:

Այսպիսով, ԳԾԿ-ի կողմից ապրիլ ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ ներկայացված ծախսերի կատարման հայտը և հաշվարկ-բացատրագիրը իր մեջ ներառում է նաև մարտ ամսին կատարված ծախսերը:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 4.2. կետի պահանջների հետ, այն է. «Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր»: Այսինքն, ըստ պայմանագրի, ԳԾԿ-ն իրավունք չունի մարտ ամսին կատարված աշխատանքները ներկայացնել 2020 թ-ի ապրիլ ամսին և վճարվել դրա համար:

Հաշվեքննության ընթացքում ԳԾԿ-ից պահանջվել է 2020 թվականի մարտ ամսին բոլոր տարածաշրջաններում կատարված հակահամաճարակային միջոցառումների քանակի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն այն չներկայացվել, իսկ ընտրանքային կարգով Կոտայքի և Էջմիածնի տարածաշրջաններում կատարված հաշվեքննությամբ պարզվել է, որ 2020 թվականի մարտ ամսին Կոտայքի տարածաշրջանում կատարվել է 28,882 հակահամաճարակային միջոցառում՝ գումարով 4,332.30 հազ. դրամ և Էջմիածնի տարածաշրջանում 18,497 միջոցառում՝ գումարով 1,978.05 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Անասնահամաճարակային կայունությունը ապահովելու նպատակով առաջացել է անհետաձգելի պահանջ՝ 2020 թվականի մարտ ամսին սկսվել և իրականացվել է անասնահակահամաճարակային միջոցառումներ, որից ելնելով

համայնքային անասնաբույժները ըստ հրահանգի իրականացրել են միջոցառումներ և կազմած կատարողական ակտերը ներկայացրել տարածքային համաճարակաբաններին: Մարտ և ապրիլ ամիսներին իրականացված անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների հաշվետվությունները համաճարակաբանների կողմից ներկայացվել են ԳԾԿ ՊՈԱԿ ապրիլ ամսվա ավարտին միաժամանակ, որը ենթակա է ստուգման և վճարման:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքում նշվում է, որ 2020 թվականի մարտ ամսին սկսել և իրականացրել են անասնահակահամաճարակային միջոցառումներ, որից ելնելով համայնքային անասնաբույժները ըստ հրահանգի իրականացրել են միջոցառումներ և կազմած կատարողական ակտերը ներկայացրել տարածքային համաճարակաբաններին: Պետք է նշել, որ համայնքային անասնաբույժների և տարածքային համաճարակաբանների հետ պայմանագրեր են կնքվել 2020 թվականի ապրիլ ամսից, հետևաբար արձանագրվել են վերը նշված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Նախարարության կողմից առարկություն կամ հիմնավոր պարզաբանում չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն 2020 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի կնքման ժամկետի և կատարվելիք միջոցառումների և դրանց հետ կապված վճարումների միջև կամ 2020 թվականի մարտ ամսին հակահամաճարակային միջոցառումներ չպետք է նախատեսվեին, քանի որ պայմանագիրը կնքվել է ավելի ուշ:

Առկա է անհամապատասխանություն \ll աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված, այն է. «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 4.2. կետի պահանջների հետ, այն է. «Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված

ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր»: Այսինքն, ըստ պայմանագրի, ԳԾԿ-ն իրավունք չունի մարտ ամսին կատարված աշխատանքները ներկայացնել 2020 թ-ի ապրիլ ամսին և վճարվել դրա համար:

11. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Կոտայքի մարզի Կոտայքի տարածաշրջանին տրամադրված պատվաստանյութերի և իրականացված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով սահմանված պահանջներ հետ, այն է «Տարբեր գործադրումների կամ նույն գործադրուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից»: Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանը 2020 թվականին ընթացքում միաժամանակ աշխատանքային պայմանագրով աշխատել է ԳԾԿ-ում որպես համաճարակաբան և Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանում որպես անասնաբույժ:

Կոտայքի մարզի Կոտայքի տարածաշրջանը սպասարկող համաճարակաբանի հետ 2020 թվականի ապրիլի 6-ին ԳԾԿ-ն կնքել է աշխատանքային պայմանագիր՝ 1 հաստիքային միավորով, ամսական աշխատավարձի չափը սահմանվել է 203.00 հազ. դրամ: Նույն ժամանակաշրջանում, Կոտայքի մարզի համաճարակաբանը աշխատել է նաև Արամուսի համայնքապետարանում (1 հաստիքային միավոր) որպես համայնքի անասնաբույժ:

Առկա է անհամապատասխանություն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով սահմանված պահանջներ հետ, այն է «Տարբեր գործատուների կամ նույն գործատուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը

(ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից»:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի կողմից անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում չի տրվել:

Եզրակացություն

Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանը 2020 թվականին ընթացքում միաժամանակ աշխատանքային պայմանագրով աշխատել է ԳԾԿ-ում որպես համաճարակաբան և Կոտայքի մարզի Արամաուսի համայնքապետարանում որպես անասնաբույժ: Առկա է անհամապատասխանություն «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով սահմանված պահանջներ հետ, այն է «Տարբեր գործատուների կամ նույն գործատուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից»:

12. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Կոտայքի տարածաշրջանում իրականացված հաշվեքննության վերահաշվարկի ընթացակարգի վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն կապված Գեղաշեն համայնքում պարվաստանյութերը համապատասխան ջերմային պայմաններում պահպանման հետ:

Առկա էր անհամապատասխանություն անասնաբույժի կողմից պահվող մատրյանում կարարված գրանցումների հետ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի, Կոտայքի տարածաշրջանում իրականացվեց վերահաշվարկի հաշվեքննության ընթացակարգ, որի միջոցով ելակետային տվյալների հիման վրա

պարզվեց՝ տարածաշրջանի համաճարակաբանին հանձնված և անասնաբույժներին բաշխված պատվաստանյութի ծախսման հաշվարկի ճշտությունը:

Հաշվեքննության վերահաշվարկի ընթացակարգը իրականացվել է 2021 թվականի ապրիլ ամսին, որով պարզվել է 01.01.2021թ-ից մինչ 22.04.2021թ-ն ընկած ժամանակահատվածում ստացված, բաշխված և ծախսված պատվաստանյութերի արժանահավատությունը:

Հաշվեքննություն է իրականացվել, Կոտայքի մարզի թվով 17 համայնքները սպասարկող, անասնաբույժներին հանձնված և ծախսված պատվաստանյութերի մասով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ նշված համայնքներից միայն չորս էին ապահովված ԳԾԿ-ի կողմից տրամադրված առնարաններով, մնացած համայնքներում կամ բացակայում էին ԳԾԿ-ի կողմից տրամադրված սառնարանները կամ տրամադրված սառնարանները չէին աշխատում: Պատվաստանյութերը հիմնականում պահվում էին անասնաբույժների անձնական սառնարաններում՝ օգտագործվող սննդամթերքի կողքին: Առկա է անհամապատասխանություն ԳԾԿ-ի կողմից անասնաբույժերի հետ կնքած պայմանագրի 2.3.6. կետի պահանջների հետ, այն է. Պատվիրատուից ստանալ, համապատասխան ջերմային պայմաններում պահպանել և պահանջվող ժամկետում օգտագործել միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ անասնաբուժական դեղամիջոցները:

Պետք է նշել, որ անասնաբույժերի հետ կնքված նույն պայմանագրերում պատվիրատուի պարտավորությունների մեջ նշված չէ, որ պետք է անասնաբույժերը ապահովվեն դեղմիջոցները համապատասխան ջերմային պայմաններում պահպանելու համար անհրաժեշտ սառնարաններով:

Առկա է անհամապատասխանություն կապված Գեղաշեն համայնքում պարվաստանյութերը համապատասխան ջերմային պայմաններում պահպանման հետ: Համայնք այցելության ժամանակ պարզվել է, որ պատվաստանյութը պահվում է նկուղում, այն դեպքում երբ տվյալ պատվաստանյութերի պահման համար նախատեսված է +2-ից +8 ջերմաստիճանային պայմանները, իսկ ԳԾԿ-ի կողմից տվյալ համայնքի անասնաբույժին տրամադրված սառնարանը առկա չէր:

Որոշ համայնքներում կանխարգելիչ միջոցառումները իրականացվել են պատվաստանյութերի ստացումից մոտ երկու ամիս հետո, այն դեպքում, երբ

համաճարակաբանն ուներ մեծ սառնարանային պահոց և հնարավոր էր տվյալ սառնարանում պահել:

Առկա էր անհամապատասխանություն անասնաբույժի կողմից պահվող մատյանում կատարված գրանցումների հետ, օրինակ Մայակովսկի համայնքում, կատարողական ակտերին կից պատվաստանյութի ծախսը հիմնավորող մատյանում, կատարված հակահամաճարակային միջոցառման վերաբերյալ գրառումներում բացակայում էին անասնատիրոջ ստորագրությունները: Որոշ համայնքների անասնաբույժների մատյաններում անասնատերերի անվան դիմաց դրված ստորագրությունները իրար նման էին: Անասնաբույժների կողմից այս փաստը բացատրվում էր, անասնատիրոջ տունը չլինելու հանգամանքով:

Պետք է նշել, որ 2020 թվականի տարեվերջյան գույքագրման տվյալներով Կոտայքի մարզի Կոտայքի տարածաշրջանում արձանագրվել է, որ առկա են 23 սառնարաններ, 2007-2009թ. արտադրության, որտեղ չի նշվել սառնարանների սարքին լինելու հանգամանքը:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն կապված Գեղաշեն համայնքում պատվաստանյութերը համապատասխան ջերմային պայմաններում պահպանման հետ:

Առկա էր անհամապատասխանություն անասնաբույժի կողմից պահվող մատյանում կատարված գրանցումների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ԳԾԿ ՊՈԱԿ-ի համապատասխան լիազոր մարմնի կողմից տարվել են բացատրական և լրացուցիչ աշխատանքներ, տրվել են ցուցումներ՝ Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանին, մատյաններում ճիշտ և պատշաճ գրառումներ իրականացնելու և առանց ջնջումների աշխատելու համար: Ըստ Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբան՝ Ա. Հակոբյանի, իր կողմից լրացված մատյաններում կամ կազմված ակտերում սխալները և վրիպումները անուշադրության արդյուն են և չեն պարունակում դիտավորություն, որի համար ստացել է նկատողություն: Ինչ վերաբերվում է անասնաբույժներին տարիներ առաջ տրամադրված սառնարանների սարքինությանը և առկայությանը, այս առումով ԳԾԿ ՊՈԱԿ-ի կողմից տարվում են աշխատանքներ սառնարանային բազան թարմացնելու և համալրելու մասով, միաժամանակ նշեմ, որ ըստ համայնքի անասնաբույժի հետ

կնքված քառաքաղցիաիրավական պայմանագրի, անասնաբուժը պարտավորվում է մատուցել ծառայություն և պատվաստանյութերը պահպանել ըստ հրահանգին համապատասխան ջերմաստիճանով: Հաճախ կարող են լինել այն դեպքերը, որ անասնատերերը պատվատման պահին բացակայում են, և անասնաբուժական գրանցամատյանում կարող են բացակայել անասնատերերի ստորագրությունները, ինչպես նաև կոռոնավիրուսային համավարակն է հանդիսանում պատճառ անասնատերերի կողմից գրանցամատյանում ստորագրությունների բացակայության:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք Նախարարությանը հակահամաճարակային միջոցառումների արդյունավետ և պատվաստանյութերի ջերմային ռեժիմների ճիշտ պահպանման համար անասնաբույժներին ապահովել համապատասխան սառնարանային սարքավորումներով:

13. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ

Կրկնվող կետ

Թիվ 1116 Ծրագրի թիվ 11001 միջոցառման շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը առաջին կիսամյակի ընթացքում 4266 հողվածով՝ «Առողջապահական և լաբորատոր նյութերի» գնման համար ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 327,156.20 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 81,857.20 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 160,721.42 հազ. դրամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում է առաջին կիսամյակի ընթացքում կատարված առողջապահական և լաբորատոր նյութերի գնումները, որի համար փաստացի վճարումը կատարվել է.

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարարման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/
1	Ռոզ-բենգալ բրուցելոզի ախտորոշման նյութ /մլ/	«Ազաստ» ՍՊԸ	14.02.2020թ	17,090	3,418.00
2	Լեյկոզի ախտորոշիչ հավաքածու /մլ/	«Ազաստ» ՍՊԸ	18.03.2020թ	7000	700.00
3	Անանսնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյութ /մլ/	«Ազաստ» ՍՊԸ	18.03.2020թ	1,476,500	11,073.80
4	ՄԵԿ ծաղիկի և ԽԵԿ հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութ /մլ/	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	18.03.2020թ	3,618,850	45,235.60
5	Կենդանիների հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված չոր պատվաստանյութ /մլ/	«Ազաստ» ՍՊԸ	17.04.2020թ	683,250	9,080.39
6	Կաուստիկ սոդա /կգ/	«Յունիքիմ» ՍՊԸ	21.04.2020թ	1000	270.00

Հ/Հ	Անունը կամ ապրանքային նշանը	Հաղթող կազմակերպության անվանումը	Մատակարարման ամսաթիվը	Քանակը	Գումարը /հազ.դրամ/
	Ֆորմալին /կգ/		21.04.2020թ	1000	336.00
7	ԻՆԵԿ և ոչխարների խշխշան պալար հիվանդության նկատմամբ հիդրոքսիդալյումի նային, ֆորմալինային պատվաստանյութ /մլ/	«Ագաստ» ՍՊԸ	27.04.2020թ	1,153,200	9,560.00
8	Թռչունների կեղծ ժանդախտ H շտամի կենդանի չոր պատվաստանյութ /մլ/	«Կարեն Հայրյան» Ա/Ձ	08.05.2020թ	1,455,600	2,183.40
	Ընդամենը				81,857.19

Այսպիսով, 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում առողջապահական և լաբորատոր նյութերի գնման գործընթացին հիմնականում մասնակցել և հաղթող են ճանաչվել միևնույն կազմակերպությունները, տվյալ պարագայում հայտարարված թվով 8 առողջապահական և լաբորատոր նյութերի 5 մրցույթներում հաղթող է ճանաչվել «Ագաստ» ՍՊԸ-ն, ընդ որում բոլոր դեպքերում տվյալ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկներում ապրանքի ինքնարժեքը հավասար է շահույթի գումարին, այսինքն տվյալ կազմակերպության շահույթը գնային առաջարկում կազմել է 100%:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության կողմից ձեռքբերված և ելքագրված առողջապահական և լաբորատոր նյութերի շարժը և պարզվել է, որ 01.04.2020 թվականի դրությամբ պահեստում առկա են ժամկետանց պատվաստանյութեր, օրինակ՝ պահեստում առկա 621,800մլ, 870.47 հազ. դրամ ընդհանուր գումարով թռչունների կեղծ ժանդախտ «H» շտամի կենդանի չոր պատվաստանյութ, որի պիտանելիության ժամկետը ավարտվել է 2020

թվականի հունվար ամսին և այն օգտագործման համար այլևս պիտանի չի եղել: Պիտանելության ժամկետում չէր նաև 1600 մլ, գումարով 11.82 հազ. դրամ արժողությամբ, անասնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյութը: Պետք է նշել, որ ժամկետանց պատվաստանյութերի առկայությունը պայմանավորված է պատվաստանյութերի գնման չափաբաժինների ոչ ճիշտ պլանավորման և օգտագործման ժամկետների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020թ.պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն պատվաստանյութերի գնման չափաբաժինների պլանավորման, ձեռքբերման և օգտագործման ժամկետների մասով:

Ծանոթություն

Սույն հաշվեքննության շրջանակներում անասնաբուժության մեջ կիրառվող պարվաստանյութերի ձեռքբերման ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կարող են լինել այլ ռիսկեր կապված հարկային պարտավորությունների կատարման հետ: Այդ իմաստով նպատակահարմար է քննարկել ՀՊ 2021 թվականի գործունեության ծրագրում նոր հաշվեքննություն սահմանելու հարցը:

14. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ձեռք բերված կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութի գնման հետ կապված բանկային երաշխիքի վերաբերյալ:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի ինն ամիսների կատարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ թիվ 1116 Ծրագրի թիվ 11001 միջոցառման շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ինն ամիսների համար 4266 հոդվածով՝ «Առողջապահական և լաբորատոր նյութեր» գնման համար ճշտված պլանով նախատեսել է հատկացնել 328,976.20 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 318,185.68 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 346,976.82 հազ. դրամ:

Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի ինն ամիսների ընթացքում ձեռքբերված 318,185.97 հազ. դրամի առողջապահական և լաբորատոր նյութերից 222,371.25 հազ. դրամը բաժին է ընկել կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստանյութին, որը նախատեսված 2020 թվականի մայիս ամսվա փոխարեն մատակարարվել է 2020 թվականի օգոստոս ամսին:

Այսպես, 2019 թվականի դեկտեմբերի 10-ին հայտարարվել է «ՀՀ ԷՆ-ԲՄԱՊԶԲ-19/1» ծածկագրով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռք բերման մրցույթի հրավեր: Մրցույթը բացվել է 2020 թվականի հունվարի 21-ին, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության երկու կազմակերպություններ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ, վերջինս հանդիսանում է տվյալ պատվաստանյութի արտադրողը:

Երկու մասնակիցների գնային առաջարկները հավասար են եղել և կազմել են 226,272.50 հազ. դրամ, որը հավասար է եղել պատասխանատու ստորաբաժանման կողմից սահմանված նախահաշվային գնին: Ընդ որում, պետք է նշել, որ սահմանված նախահաշվային գինը միավորի արժեքի համար երկու դրամով ավելի թանկ է քան նախորդ տարվա համար նույն արտադրողից ձեռք բերված պատվաստանյութի միավորի արժեքը, ընդհանուր առմամբ նախորդ տարի ձեռքբերման գնից թանկ է 6,242.0 հազ. դրամով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն մասնակիցների հետ վարվել են բանակցություններ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ն 222,371.25 հազ. դրամ գնային առաջարկով, որը չի հանդիսանում պատվաստանյութն արտադրող կազմակերպությունը: Ընդ որում, պետք է նշել, որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի գնային առաջարկը միավոր արժեքի հաշվով 0.75 դրամով

ավելի թանկ է նախորդ տարվա ձեռք բերման միավորի գնից, որը կազմում է ընդհանուր գնի մեջ 2,340.00 հազ.դրամ:

2020 թվականի փետրվարի 2-ին Նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, պատվաստանյութի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել է 2020 թվականի մայիսի 31-ը: «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բանկային երաշխիք 35,000.00 հազ. ՌԴ ռուբլու չափով, որը գործել է մինչև 2020 թվականի հունիսի 26-ը: Սահմանված ժամկետում «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից պատվաստանյութը չի մատակարարվել, ժամկետը լրանալուց հետո վերջինս դիմել է Նախարարություն և երկարացրել է մատակարարման ժամկետը մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, սակայն նշված ժամկետում նույնպես պատվաստանյութը չի մատակարարվել և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը խզվել է:

2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին գրություններով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՌԴ «Յենտր ինվեստ» բանկ որպեսզի բենեֆիցիար պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված 267,190.00 հազ. դրամ դրամի փոխհատուցման պահանջ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար, սակայն այն չի փոխանցվել, քանի որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված և թարմացված պայմանագրի հիման վրա երկարացված մատակարարման ժամկետը ավարտվել է 2020 թվականի հունիսի 23-ին, իսկ բանկային երաշխիքի ժամկետը՝ 2020 թվականի հունիսի 26-ին: Այսպիսով, Նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Սույն ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կողմից երաշխիքային ժամկետում բանկին ներկայացվել է պայմանագրի և որակավորման ապահովման կատարման պահանջ, ինչը սակայն բանկի կողմից անհիմն մերժվել է, սակայն պատվիրատուի կողմից բանկին ներկայացվել է նոր 09.18.11/11492-2020 գրությունը, որում հստակ նշված է բանկի մերժման անհիմն լինելը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննողների կողմից արձանագրվել է, որ Նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը

ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում, իսկ ինչ վերաբերվում է գրություններին, ապա այո, գրությունները առկա են:

Եզրակացություն

Առկա է հսկողության գործընթացի թերացում, կապված նախարարության կողմից բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու հետ, այն է նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երաշխիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում:

Ծանոթություն

Սույն հաշվեքննության շրջանակներում անասնաբուժության մեջ կիրառվող պարվաստանյութերի ձեռքբերման ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կարող են լինել այլ ռիսկեր կապված հարկային պարտավորությունների կատարման հետ: Այդ իմաստով նպատակահարմար է քննարկել ՀՊ 2021 թվականի գործունեության ծրագրում նոր հաշվեքննություն սահմանելու հարցը:

15. 1116 Ծրագրի 11003 միջոցառման Պայմանագրով նախատեսված ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով իրականացվող մոնիթորինգի վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև 10.02.2020թ. կնքված թիվ 30-20 պայմանագրի համաձայն պետական մարմինը պարտավորվում է 1116 Ծրագրի N 11003 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման իրականացման նպատակով ՀԱԲԼԾԿ-ին հատկացնել 338,919.4 հազ դրամ /ներառյալ ԱԱ/ գումար: Համաձայն պայմանագրի 2.3.1 կետի Նախարարությունը ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Սակայն, հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մոնիթորինգ չի իրականացվել և չեն իրականացվել համապատասխան հսկողության

գործընթացներ անհամապատասխանությունները կանխարգելելու կամ բացահայտելու և ուղղելու համար:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նախարարության հետ կնքված Պայմանագրի շրջանակներում ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականը ներկայացվել է փաստացի հատկացված գումարին համապատասխան: Քանի որ Պայմանագրը կնքվել է 2020 թվականի փետրվարի 10-ին, իսկ նախատեսված աշխատանքներն, ըստ էության, մեկնարկել են մարտ ամսից, այդ իսկ պատճառով առաջին եռամսյակում հնարավոր չէր ապահովել 100%-ոց կատարողական և ամբողջությամբ փոխհատուցել ՊՈԱԿ-ի հաստատուն ծախսերը (աշխատավարձ, կոմունալ վճարներ և այլն): Գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպման համար անհարաժեշտ էր Պայմանագրով ամրագրել կանխավճարի ձևով որոշակի չափի գումարի հատկացում՝ հետագայում փաստացի աշխատանքով փոխհատուցելու պայմանով, հակառակ դեպքում գումարը ենթակա կլիներ հետ վերադարձման Նախարարությանը, ինչը փաստացի չի ամրագրվել: Նշված խնդրի վերաբերյալ ՊՈԱԿ-ը գրավոր տեղեկացրել է Նախարարությանը և 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ առաջացած անհամապատասխանությունն ամբողջությամբ շտկվել է:

Ինչ վերաբերում է 2020 թվականի տարեկան կատարողականին, ապա վերջինիս թերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԳԾԿ-ի, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ՊՈԱԿ-ին տրամադրվել են ավելի քիչ լաբորատոր նմուշներ, և փորձաքննություններն իրականացվել են տրամադրված նմուշներին համապատասխան՝ համաձայն պատվերների պահանջի:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն պայմանագրի 2.3.1 կետի պահանջների մասով:

16. 1116 Ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող աշխատակիցների վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 1.1 կետի պահանջների հետ:

Նախարարություն և ՀԱԲԼԾԿ-ի միջև 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված թիվ 30-20 պայմանագրի շրջանակներում Ծրագրի ծառայությունների մատուցման գործառույթներն իրականացվել են ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի հաստիքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող աշխատակիցների՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքած աշխատակիցների միջոցով:

ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2020թ-ի փետրվար ամսից սկսած Ծրագրով նախատեսված վճարովի ծառայությունների ձեռք բերման համար 34 քաղաքացիների հետ առանց մրցույթի կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր, շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման գործընթացի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում կազմակերպումն առաջացնում է մի շարք հարցեր, որոնք ունեն պարզաբանման կարիք.

1. Ի՞նչպես պետք է ապահովվի ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանումներում (տարածաշրջաններում) պահանջվող քանակի մասնագետների առկայությունը սահմանված ժամկետներում,

2. Ճախսային ի՞նչ հոդվածով պետք է արտացոլվի եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները, քանի որ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված աշխատանքները որպես ծառայություն դիտարկելու պարագայում դրանք տվյալ տարվա բյուջեի նախահաշվում պետք է արտացոլվեն 4241 «Մասնագիտական ծառայություններ» ծախսային հոդվածում և վճարվեն այդ հոդվածից: Իսկ եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները, որպես կանոն, արտացոլվում են 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» ծախսային հոդվածում: Այս դեպքում ստացվում է, որ ՊՈԱԿ-ի՝ տվյալ տարվա համար հաստատված աշխատավարձի ֆոնդի մեջ եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները գերազանցում են հարկային օրենսդրությամբ սահմանված սահմանաչափերը:

3. Ինչպե՞ս պետք է իրականացվի հաշվապահական հաշվառումը, որպեսզի հնարավոր լինի հարկային հաշվետվությունում արտացոլել եկամտային հարկը և

պարտադիր այլ վճարները. ստացվում է, որ ՊՈԱԿ-ը ձեռք է բերում ծառայություններ, որոնք հաշվառում է որպես աշխատանքի վարձատրություն, ինչը հակասում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման կանոններին:

Միաժամանակ առաջանում են կազմակերպչական և տեխնիկական մի շարք հարցեր, որոնք նույնպես քննարկման և պարզաբանման կարիք ունեն:

Ելնելով վերոգրյալից՝ ՊՈԱԿ-ը հույս է հայտնում, որ բերված առարկությունները, բացատրությունները և պարզաբանումներն ընդունելի են, իսկ առկա թերություններն ու բացթողումները կշտկվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին: Իսկ պարզաբանմամբ առաջադրված հարցերը առաջարկում ենք դիմել համապատասխան լիազորություններով օժտված պետական մարմիններին:

Եզրակացություն

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների հետ, մասնավորապես 1.1 կետ, այն է օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

4 ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

17. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակում Նախարարության աշխատակիցների պարզևատրման վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հողվածի ներքո պարզևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջեային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5 հրամանի հավելված 16-ի հետ:

Կրկնվող կետ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի կարարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1058 Ծրագրի 11001 միջոցառման 4111, 4112, 4113 տնտեսագիտական հողվածներով միջոցառումների շրջանակներում 2020 թվականի ընթացքում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,879,102.30 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 1,829,157.14 հազ. դրամ:

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարզևատրում» հողվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հողվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝ տարանջատելով պարզևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

Աղյուսակ 1, հազ. դրամ

Հոդվածի կոդ	Հոդվածի անվանում	Հիմնական աշխատավարձ	Պարգևատրում	Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,175,339.90	261,777.70	22.2%
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	279,033.10	0%
4113	Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	-	122,300.80	0%
	Ընդամենը	1,175,339.90	663,111.60	56.4 %

Ինչպես պարզվում է 2020թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել է 261,777.70 հազ. դրամ գումարի չափով 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշված խնայողությունները առաջացել են 2020թ. ընթացքում նախարարության հաստիքացուցակով հաստատված թափուր պաշտոնները չհամալրելու արդյունքում:

Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան

լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Նույն հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ *անմիջական ղեկավարի առաջարկությամբ* կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով պարգևատրումների տրամադրման ընթացակարգերը պարզվեց, որ աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ հիմնավորումները բացակայում են: Ավելին, պարգևատման գումարները հիմնական աշխատավարձի գումարների համեմատ կազմում են 20-251 %:

Նշենք նաև, որ առկա են դեպքեր, երբ աշխատակիցը ընդունվել է աշխատանքի և նույն ամսվա համար արդեն իսկ ստացել է պարգևատրում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցների շրջանակներում նախարարության աշխատողներին պարգևատրումները տրվում են նախարարի համապատասխան հրամանների համաձայն, որոնցում հստակ նշվում է նաև պարգևատրելու հիմքը՝ «աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և հատուկ առաջադրանքների կատարման համար», ինչը համարժեք է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում «հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար» ձևակերպմանը: Յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարված որակյալ աշխատանքի փաստաթղթավորված հիմնավորում չի տրվել՝ դրա ձևաչափի օրենսդրական պահանջի բացակայությամբ պայմանավորված, պարգևատրումների տրամադրման հաստատված որևէ իրավական ակտով համապատասխան կարգ չի հաստատվել, ինչպես նաև խելամիտ չի համարվել շուրջ 400 աշխատակցի վերաբերյալ անհատական հիմնավորումների կազմումը:

(ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին: Ինչ վերաբերվում է շուրջ 400 աշխատակցի վերաբերյալ անհատական հիմնավորումների կազմումը ոչ խելամիտ համարվելուն, ապա «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ: Առաջնորդվելով պարզաբանման տրամաբանությամբ, կարելի է ենթադրել, որ առանց որևիցե փաստաթղթավորման և հիմնավորման յուրաքանչյուր աշխատակից կարող է անսահմանափակ քանակով և չափով պարգևատրվել, ինչը չի բխում Օրենքի տրամաբանությունից: Բացի այդ, նշված պարգևատրման գումարների տրամադրման համար անմիջական ղեկավարների առաջարկությունները, հանդիսանում են նշված ծախսերի ելակետային փաստաթղթեր:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ կետի հետ կապված, ինչպես նաև Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ:

Առաջարկություն

Առաջարկվում է փաստաթղթավորել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պարգևատրման մասին հրամանների հիմնավորումները:

18. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի մարտ ամսին կատարված ախտորոշիչ միջոցառումների վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում 2020թ-ի առաջին եռամսյակի համար ներկայացված «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության մասով, քանի որ նշված ժամանակահատվածում կատարվել են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ, սակայն հաշվետվությամբ ծախսը ցույց չի փրվել:

Համաձայն ԳԾԿ-ի կողմից առաջին եռամսյակի վերաբերյալ ներկայացված՝ «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության, նշված ժամանակահատվածում ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ չեն իրականացվել: Տվյալ հաշվետվությունը խեղաթյուրված է, քանի որ տվյալ ժամանակահատվածում, այսինքն՝ առաջին եռամսյակի ընթացքում, կատարվել են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ: Հաշվի առնելով կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաև ախտորոշիչ միջոցառումների մասով՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀԱԲԼԾԿ) կողմից 2020 թվականի առաջին եռամսյակի վերաբերյալ ներկայացվել է «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվություն, որտեղ նշվել է, որ 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թիվ 1116 ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում կատարվել են 92,659 հատ լաբորատոր փորձաքննություններ, որից 91,539 հատը՝ բրուցելոզի և 63 հատը՝ լեյկոզի, հետևաբար նշված լաբորատոր փորձաքննությունների համար ՀԱԲԼԾԿ-ն նմուշները ստացել է ԳԾԿ-ից, սակայն, ինչպես նշեցինք, ԳԾԿ-ն հաշվետվությամբ նշված նմուշառումներն առաջին եռամսյակում ցույց չի տվել և ներկայացրել է կիսամյակային հաշվետվության մեջ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Անասնահամաճարակային կայունությունը ապահովելու նպատակով առաջացել է անհետաձգելի պահանջ՝ իրականացվել է ախտորոշիչ միջոցառումներ մարտ ամսից սկսած և ներկայացվել է ապրիլ ամսվա կատարված ախտորոշիչ միջոցառումների հաշվետվությունների հետ համատեղ, չտարանջատելով երկու ամիսների ընթացքում կատարված միջոցառումները: Անասնաբույժները և համաճարակաբանները հրահանգավորվել են ԳԾԿ ՊՈԱԿ-ի համապատասխան լիազոր մարմնի կողմից:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվետվությամբ արձանագրված խեղաթյուրմանը:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում 2020թ-ի առաջին եռամսյակի համար ներկայացված «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության մասով, քանի որ նշված ժամանակահատվածում կատարվել են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ, սակայն հաշվետվությամբ ծախսը ցույց չի տրվել:

19. 1116 Ծրագրի 11001 Միջոցառման շրջանակներում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից բաշխված պատվաստանյութի քանակների վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից բաշխված պատվաստանյութի քանակների և ծախսի հետ կապված՝ 944.70 հազ. դրամի:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ տարածաշրջանի համաճարակաբանի կողմից անասնաբույժներին պատվաստանյութերի հանձնումը և ծախսը գրանցվում է իր մոտ առկա «գրասենյակային գրքի դեղորայքի բաշխման մատյանում», որը ներքին հաշվառման փաստաթուղթ է համարվում, քանի որ կնքված և համարակալված չէր, իսկ մատյանի լրացումները կատարվում էր կամ ջնջումներով կամ մատիտով:

Տարածաշրջանում անասնաբույժների կողմից իրականացված միջոցառումների և պատվաստանյութերի ծախսի վերաբերյալ կազմված 2020 թվականի մարտ ամսի ակտերը համաճարակաբանների կողմից ամփոփվել էր 2020թ-ի ապրիլ ամսի համար կազմված ամփոփ ակտում:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից ստացված և բաշխված, ինչպես նաև անասնաբույժերի կողմից ստացված և ծախսված պատվաստանյութերի շարժը:

Աղյուսակ 2

Միջոցառման ցուցանիշի անվանում	Մնացորդ ըստ ԳԾԿ-ի 31.12.20219	Մուտք ըստ բեռնագրի		Բաշխում մատյանի		Տարբերու թյուն	Ծախսը ըստ ակտերի		Տարբերու թյուն
		Ամսաթիվ	Քանակ /մլ/	Ամսաթիվ	Քանակ /մլ/		ամսաթիվ	Քանակ /մլ/	
1	2	3	4	5	6	7=2+4-6	9	10	10=6-9
Դարբաղ	15900	24.03	13200	16.03	29300		14.03-31.03	23800	
							01.04-14.04	5800	
Ընդամենը	15900		13200		29300	200 -		29600	300 -
Սիբիրախտ	3800	24.03	6800	16.03	23100		18.03.-27.03	1400	
		15.04	19500	30.04	17450		03.04-30.04	8450	
		5.06	8450				02.05-21.05	5550	
							12.06-27.06	6100	
Ընդամե նը	3800		34750		40550.00	2000.00 -		21500	19050
Էմկար		24.03	14500	09.04-16.04	30300		01.06-20.06	19300	
		27.05	6400				10.05-22.05	8500	
		5.06	24100	4.04	32000		18.03-21.03	2600	
		15.04	31400				03.04-24.04	15100	
Ընդամենը			76400		62300	14100		45500	16800

Հանգուց. Մաշկաբորբ		15.04	162800	16.04	166100		05.05-23.05	91800	
							01.06-18.06	25750	
Ընդամենը			162800		166100	3300 -		117550	48550
Խոզերի դասական ժանտախտ	26700	24.03	13700	10.03-12.03	31400		14.03-30.03	29900	
		5.06	1500	30.04	18100		02.06-25.06	7400	
		15.04	23700	06.06-07.06	3200				
		29.04	4000						
Ընդամենը	26700		42900		52700			37300	15400
Թռչունների Նյուրասլ	5300	5.06	155200	6.06	42100		02.06-22.06	4600	
Ընդամենը	5300		155200		42100			4600	37500

Ուսումնասիրով պատվաստանյութի շարժը, մասնավորապես դաբաղի պատվաստանյութի մասով՝ 16.03.2020թ-ի դրությամբ, պարզվում է, որ պատվաստանյութի ընդամենը 15,900 մլ մնացորդի առկայության պայմանում բաշխվել է 29,300 մլ պատվաստանյութ կամ մնացորդից ավելի բաշխում է ցույց տրվել 13400 մլ, գումարով 944.70 հազ. դրամ, այն դեպքում, երբ պատվաստանյութի հաջորդ խմբաքանակը ստացել է ընդամենը 24.03.2020թ-ին, այն էլ բաշխվածից Ա/մնացորդի հետ միասին/ 200 մլ-ով պակաս:

Կատարողական ակտերով ծախսն անասնաբույժների կողմից ցույց է տրվել 14.03-ից սկսած, այն դեպքում, երբ պատվաստանյութի բաշխումը ցույց է տրվել 16.03-ից սկսած:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի կողմից պարզաբանումներ չի ներկայացվել:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից բաշխված պատվաստանյութի քանակների և ծախսի հետ կապված, որը նկարագրված է ամփոփ աղյուսակում:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Առաջարկում ենք ԳԾԿ-ին տարածքային համաճարակաբաններին տրամադրել պատվաստանյութերի բաշխման կնիքված և համարակալված մատյաններ, սահմանել պատվաստանյութերի բաշխման կոնկրետ կարգ, որով կաշխատեն բոլոր տարածաշրջաններում:

20. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ՝ 11003 միջոցառման շրջանակներում Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված մեկ փորձաքննության ինքնարժեքի հաշվարկի վերաբերյալ

Առկա է 5,285.40 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրում ինքնարժեքի գնագոյացման հաշվարկում:

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի տարեկան կառավարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1116 Ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում 4637 հոդվածով 2020 թվականի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 338,919.40. հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 286,952.74 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 286,952.74 հազ. դրամ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև 10.02.2020թ. կնքված թիվ 30-20 պայմանագրի (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն պետական մարմինը պարտավորվում է 1116 Ծրագրի N 11003 «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումներ» միջոցառման իրականացման նպատակով ՀԱԲԼԾԿ-ին հատկացնել 338,919.4 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ/ գումար, պայմանագրի 2.1.2 կետով սահմանված հաշվետվությունների և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների հանձնման–ընդունման արձանագրության հիման վրա: Համաձայն պայմանագրի N1 հավելվածի 2020թ. ընթացքում նախատեսվել է իրականացնել 1,051,923 հատ փորձաքննություն, յուրաքանչյուրի միավորի միջին գինը սահմանելով 322.19 դրամ /ներառյալ ԱԱՀ/:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է նաև մեկ փորձաքննության ինքնարժեքի միջին գինը, որը ըստ ներկայացված հաշվարկի սահմանված է 322.19 դրամ: Արդյունքում պարզվել է, որ ինքնարժեքի հաշվարկի մեջ ներառված է նաև Ռոզ-Բենգալ հակաձնի արժեքը՝ 6 դրամ /օգտագործվում է միայն բրուցելոզի ախտորոշման փորձաքննության ժամանակ/, այն դեպքում, երբ հակաձնի ձեռք է բերվում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից և տրամադրվում է ՀԱԲԼԾԿ-ին անվճար: 2020թ. ընթացքում ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացվել է 483,369 բրուցելոզի ախտորոշման լաբորատոր փորձաքննություն: Ներառելով հակաձնի արժեքը ինքնարժեքի հաշվարկի մեջ առաջանում է խեղաթյուրված հաշվարկ 2,900.20 հազ. դրամ գումարի չափով, իսկ տարեկան կտրվածքով այն կազմում է 5,285.40 հազ. դրամ /880,913*6 դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Մեկ փորձաքննության գինը (ինքնարժեքը) ճշգրիտ հաշվարկելն ուղղակի անհնար է, քանի որ ՊՈԱԿ-ն իրականացնում է 9-10 տիպի փորձաքննություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան գնագոյացումը: Այս առնչությամբ տվյալ տարվա բյուջեի հաստատումից առաջ ՊՈԱԿ-ի կողմից բազմիցս առաջարկվել է Նախարարությանը վերանայել պայմանագրով սահմանվող գինը և այն ամրագրել ըստ փորձաքննությունների տեսակների, սակայն առաջարկությունը մնացել է անպատասխան: Այդ իսկ պատճառով մեկ միավոր փորձաքննության գինը՝ 322.19 ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանվել է Պայմանագրի ընդհանուր բյուջեն նախատեսված փորձաքննությունների ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով (338,919,400/1,051,923=322.19)՝ որպես Պայմանագրի միջին գին, որը խիստ պայմանական է և ռոզ-բենգալ հակաձնի արժեքի ներառելը կամ չներառելն ինքնարժեքի մեջ որևէ էական ազդեցություն չունի:

ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագրի շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակում կենդանիների բրուցելոզ հիվանդության ախտորոշման նպատակով իրականացված 483369 հատ լաբորատոր փորձաքննությունների մեջ ներառվում են նաև ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանումներից կենտրոնական լաբորատորիա ուղարկված բրուցելոզ հիվանդությամբ վարակված լինելու կասկածով արյան նմուշների նկատմամբ իրականացված կրկնակի փորձաքննությունները վերջնական հավաստի ախտորոշում կատարելու նպատակով:

Հարկ է նշել, որ ցանկացած ծառայության, ապրանքի միավորի ինքնարժեքը հաշվարկելիս պետք է հաշվի առնվեն բոլոր ծախսերը անկախ դրանց փոխհատուցման աղբյուրից:

Միաժամանակ առաջարկվում է պարզաբանել Ձեր կողմից ներկայացված մեկ փորձաքննության իրական գնի՝ ինքնարժեքի խեղաթյուրված հաշվարկի բացվածքը, որը կազմել է 2,900.2 հազ. դրամ, քանի որ պայմանագրով սահմանված է պայմանական միջին գին:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ինչպես նշվել է հաշվեքննության արձանագրությունում, ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների 98.6 % կազմում է բրուցելոզի փորձաքննությունները, հետևաբար պարզաբանմամբ նշված 9-10 փորձաքննությունները կազմում են 1,4 %: Բացի այդ, պարզաբանմամբ

ներկայացված այն միտքը, որ նշված ինքնարժեքը հանդիսանում է միջին գին, որը խիստ պայմանական է և ոռոգ-բենգալ հակաձնի արժեքի ներառելը կամ չներառելն ինքնարժեքի մեջ որևէ էական ազդեցություն չունի, ապա կարծում ենք, որ այն տեղին կլիներ եթե բրուցելոզի փորձաքննությունների տեսակարա կշիռը ընդհանուր ծավալի մեջ լիներ ոչ էական, ինչն այս պարագայում ճիշտ հակառակն է: Նշենք նաև, որ արձանագրված 2,900.20 հազ. դրամը վերաբերվում էր 2020թ, առաջին կիսամյակին, իսկ տարեկան կտրվածքով այն կազմում է 5,285.40 հազ. դրամ /880,913*6 դրամ/:

Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում արձագանքել նաև պայմանական ինքնարժեքի հաշվարկին, որից պարզ է դառնում, որ ինքնարժեքը հաշվարկվել է ելնելով ՀԱԲԼԾԿ-ին տրամադրվող գումարից, այլ ոչ թե ինքնարժեք-փորձաքննությունների քանակ – տարեկան բյուջե տրամաբանությամբ:

Եզրակացություն

Առկա է 5.285.4 հազ. դրամ գումարի չափով խեղաթյուրում ինքնարժեքի գնագոյացման հաշվարկում:

Առաջարկություն

Առաջարկում է հաշվեքննության օբյեկտին վերանայել Պայմանագրով նախատեսված լաբորատոր փորձաքննությունների համար սահմանված իրական ինքնարժեքը:

21. 1116 Ծրագրի 11003 Միջոցառման շրջանակներում Ռոգ-Բենգալ հակաձնի /անտիգեն/ բաշխման, օգտագործման և մնացորդների վերաբերյալ մարզային կառույցներից ներկայացված հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում ՀԱԲԼԾԿ-ում առկա մնացորդների և փարածաշրջանների կողմից հաշվետվությամբ ներկայացված մնացորդների մասով:

2020թ. ընթացքում նախատեսվել է իրականացնել 1,051,923 լաբորատոր փորձաքննություն, ըստ ներկայացված հաշվետվությունների իրականացվել են 890,631 փորձաքննություն, համաձայն հանձնման-ընդունման

արձանագրություններին կից ամփոփ տեղեկանքների իրականացվել են 893,895 հատ լաբորատոր փորձաքննություն:

ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների մեծ մասը կազմում են բրուցելոզի փորձաքննությունները՝ 98.6%:

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի 01.01.2020թ. դրությամբ գույքագրման ակտերի 2019թ. ձեռք բերված Ռոզ-Բենգալ հակաձնի մնացորդը կենտրոնական պահեստի և մարզային կառույցների հետ միասին կազմել է 14,088.31 մլ, իսկ 2018թ. ձեռք բերվածից՝ 7007.1 մլ:

Աղյուսակ 3

	ՄԱՐԶ	մնացորդ 01.01.2020		2020թ. Ստացված			2020թ. ծախսեր			մնացորդ 31.12.2020, ըստ հակաձնի ձեռքբերման տարեթվի		31,12,20 20թ. մնացոր դ ըստ հաշվետ վություն ների	տարբ երությ ուն	Ծանոթու թյուն	
		2018 թ. Ձեռք բերվ ածից	2019թ. Ձեռք բերվածի ց	2019թ. Ձեռք բերվածի ց	2020թ. Ձեռք բերվածի ց	այլ մու տք	2019թ. Ձեռք բերվածի ց	2020թ. Ձեռք բերվածի ց	Այլ էլք եր	2019թ. Ձեռք բերվածի ց	202 0թ. Ձեռ ք բեր ված ից	12=2+3+ 4+5+6- 7-8-9			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11		13	14=13- 12	15
1	ՀԱԲԼԾԿ-ի կենտրոնական պահեստ	1982. 53	8450		17,100		6560	17100		1,890			2,020	130	Ծանոթու թյուն 1, 2
2	Ընդամենը մարզային կառույցներում, այդ թվում	480	6,136.546	6,560	17,100		11419,47	10598,98 5				6402.99 6	8258,091		
2.1	Երևան		82.565	100	10		116,76	65,41		65,805	44,5 9	10,42	110.395	99.97 5	Ծանոթու թյուն 2
2.2	Տավուշ		291.175		1,140		465,17	389,4	13 0		446 .59 5	446.595	446.605	0.01	Ծանոթու թյուն 3
2.3	Արագածոտն		534.98	1200	2,190		1512,645	1548,11	22 2,3 35		641. 89	641.89	864.225	222.3 35	Ծանոթու թյուն 4,5
2.4	Վայոց Ձոր		14.655	400	320	100	383,37	360,525		31,285	59, 475	90.76	90.76	0	
2.5	Կոտայք	480	866.49	1000	1170		885,635	932,265	48 0	980,885	237, 615	1206,54	1,218.59	12.05	Ծանոթու թյուն 6,7
2.6	Շիրակ		104.175	1000	2,600		1714,91	1662,175	20 0	0	127. 09	127.09	127.09	0	Ծանոթու թյուն 8
2.7	Լոռի		618.05	730	2,000		1329,275	1492,445		18,775	507 ,50 5	660.65	526.28	- 134.37	Ծանոթու թյուն 9

2.8	Սյունիք		991.731	500	640	100	996,96	899,31		494,771	- 159, 31	285.461		50	Ծանոթու թյուն 10,11
2.9	Գեղարքունիք		985.085	1050	3,220		2066,385	1821,06		0	1,36 7.6 4	1,367.64	1,367.64	0	
2.10	Արմավիր		518.4	80	2,300		1161,65	984,375	10 0	0	652 .39 5	652.395	652.375	-0.02	Ծանոթու թյուն 12
2.11	Արարատ		1609.24	500	1,510		786,71	443,91		1322,53	106 6,0 7	913,555	2,388.6	1475. 045	Ծանոթու թյուն 13,14
	Ընդամենը համակարգում		15,066.5 46									6402.99 6	8128.021	1725, 025	Ծանոթու թյուն 15

Ծանոթություն 1. 01.01.2020թ. դրությամբ կենտրոնական պահեստում առկա է եղել 2019թ, ձեռք բերվածից 8450 մլ հակածին, որից 6560 բաշխվել է մարզային կառույցներին և մնացորդը կազմել է 1890 մլ: 2020թ. փետրվար ամսին կենտրոնական պահեստ է մուտքագրվել 2020թ. ձեռք բերված 17100 մլ հակածին, որը ամբողջությամբ բաշխվել է մարզային կառույցներին: Արդյունքում խախտվել է հանրային հատվածի հաշվապահական ստանդարտի պաշարների գնահատման՝ առաջին մուտք-առաջին ելք մեթոդը և 1890 մլ հակածինը դարձել է ժամկետանց:

Ծանոթություն 2. 2020թ. ապրիլի 2-ին Տավուշի մարզային ստորաբաժանումից կենտրոնական պահեստ է վերադարձվել 130 մլ որպես ժամկետանց 2019թ. համար ձեռք բերված հակածին, որի պիտանելիության ժամկետը սահմանված է եղել մինչև 01.07.2020թ. /երեք ամիս շուտ/, որը ներառված չէ որպես մուտք ՀԱԲԼԾԿ-ի 2020թ. պահեստի շարժի հաշվետվությունում:

Ծանոթություն 3. 01.01.2020թ. դրությամբ Երևանի կառույցում Ռոզ-Բենգալի մնացորդը՝ ըստ հաշվետվության կազմել է 82.565 մլ: Ապրիլ ամսին կառույց է մուտքագրվել 110 մլ հակածին: Հաշվեքննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային կառույցից 01.10.2020թ. հանձնման-ընդունման ակտով Երևանի կառույցին է տրամադրվել 100 մլ հակածին, սակայն Երևանի կառույցի հաշվետվություններում նշված մուտքը արտացոլված չէ: 2020թ. ընթացքում հակածնի ծախսը կազմել է 182.17 մլ: Վերահաշվարկի արդյունքում 31.12.2020թ. դրությամբ մնացորդը կազմում է 110.4 մլ /82.565+110+100-182.17/, սակայն ըստ կառույցի հաշվետվության նույն օրվա դրությամբ մնացորդը կազմում է 10.42 մլ, կամ 100 մլ պակաս:

Ծանոթություն 4. ՀԱԲԼԾԿ-ում Արագածոտնի մարային կառույցի համար առկա է եղել երկու հաշվետվություն միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար: 1-ին տարբերակում 01.01.2020թ. դրությամբ Արագածոտնի մարզային կառույցում հակածնի մնացորդը կազմել է 74.98 մլ, իսկ 2-րդ տարբերակում՝ 534.98մլ: Հաշվետվության երկու տարբերակների միջև տարբերությունը պայմանավորված է մարտ ամսին, առանց որևէ հիմնավոր փաստաթղթի մուտքագրված 460մլ հակածնով, որը ուղղակի հաշվետվության վրա առանց որևէ սահմանված ձևի նշում է կատարվել /նշվածի վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ն տեղեկանքով տվել է պարզաբանում/: Հաշվեքննության նպատակով հիմք է ընդունվել է հաշվետվության 2-րդ տարբերակը, քանի որ 1-ին տարբերակի դեպքում պահեստի շարժը բացասական էր: 2020թ. ապրիլ ամսին կենտրոնական պահեստից ելքի անդորրագրով Արագածոտնի մարզը ստացել է 3390 մլ հակածին, որից 1200 մլ 2019թ. ձեռք բերվածից, իսկ 2190 մլ 2020թ. ձեռք բերվածից: Ըստ հաշվետվությունների իրականացված փորձաքննությունների համար տարեկան ծախսը կազմել է 3060.755 մլ: Համաձայն 31.12. 2020թ. հաշվետվության մնացորդը կազմել է 21.89 մլ, սակայն ինչպես մարտ ամսվա հաշվետվությունը, առանց որևէ սահմանված ձևի դեկտեմբեր ամսվա հաշվետվության վրա նշում է կատարվել 620 մլ. մնացորդի

վերաբերյալ: Այսպիսով, Արագածոտնի մարզային կառույցում կենտրոնական պահեստից ստացված հակաձնի պահուստավորման առանձին հաշվառում չի իրականացվել, որի արդյունքում հաշվետվությունները չեն տալիս մարզում հակաձնի մնացորդների վերաբերյալ իրական պատկերը:

Ծանոթություն 5. Արագածոտնի մարզային կառույցից 16.03.2021թ. կենտրոնական պահեստ է վերադարձվել 2019թ. ձեռքբերված հակաձնից 222.335 մլ ժամկետանց հակաձին /74.98+460+33903060,755-21.89-620/:

Ծանոթություն 6. 01.01.2020թ. Կոտայքի մարզային կառույցում Ռոզ-Բենգալի մնացորդը կազմել է 1346.49 մլ հակաձին: 09.04.2020թ. ՀԱԲԼԾԿ-ի պահեստից ելքագրվել և մարզային կառույց է մուտքագրվել 1000 մլ 2019թ. ձեռք բերված հակաձնից և 1170 մլ. 2020թ. ձեռք բերվածից: 2020թ. օգոստոսի 6-ին Կոտայքի մարզային կառույցից կենտրոնական պահեստ է վերադարձվել /արտացոլված է մարզի հաշվետվությունում/ 2018թ. համար ձեռք բերված 480 մլ հակաձին, որի պիտանելիության ժամկետը ավարտվել է 01.06.2019թ.:

Ծանոթություն 7. 2020թ. ընթացքում ծախսվել է 1817.9 մլ, արդյունքում՝ ըստ դեկտեմբեր ամսվա հաշվետվության համաձայն մնացորդը կազմել է 1206.54 մլ.: Վերահաշվարկի արդյունքում մնացորդը պետք է կազմեր 1218.59 /1346.49+2170-1817.9-480/: Տարբերությունը 12.05 մլ: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվում է որ Կոտայքի մարզային կառույցում առանձին սյունակով ծախս է ցույց տրվել նաև այսպես կոչված ստուգիչը, որը տարվա ընթացքում կազմել է 15.9 մլ: Նշված ստուգիչի ծախսը որևէ կարգով սահմանված չէ և չի ընդունվում որպես ծախս:

Ծանոթություն 8. Շիրակի մարզային կառույցից 01.10.2020թ. ընդունման-հանձնման ակտով այլ կառույցներին է փոխանցվել 200 մլ հակաձին՝ Երևանի և Սյունիքի մարզային կառույցին յուրաքանչյուրին 100 մլ հակաձին: Սակայն Շիրակի մարզային կառույցի հաշվետվությունով նշված 200 մլ քանակը ելքագրվել է որպես ելք Երևանի կառույց, որի 100 մլ մուտքը Երևանի կառույցում բացակայում է:

Ծանոթություն 9. 01.01.2020թ. Լոռու մարզային կառույցում Ռոզ-Բենգալի մնացորդը կազմել է 618.05 մլ հակաձին: 09.04.2020թ. ՀԱԲԼԾԿ-ի կենտրոնական պահեստից ելքագրվել և մարզային կառույց է մուտքագրվել 730 մլ 2019թ. ձեռք բերված հակաձնից և 2000 մլ. 2020թ. ձեռք բերվածից: 2020թ. ընթացքում ծախսը ըստ հաշվետվությունների ցույց է տրվել 2843.32 մլ., նույն թվում 21.6 մլ. որպես ստուգիչ ցույց տրվածը: Սակայն թվաքանակն վերահաշվարկի արդյունքում ծախսը կազմել է 2685.36մլ., նույն թվում 21.6մլ. որպես ստուգիչ ցույց տրված ծախսը: Արդյունքում ավելի է ցույց տրվել 157.96 մլ հակաձնի ծախս: Նշված տարբերությունը հիմնականում պայմանավորված է հուլիս և դեկտեմբեր ամիսների հաշվետվություններում սխալ ծախս ցույց տալու արդյունքում: Այսպես, հուլիս ամսվա հաշվետվությամբ ծախսը պետք է կազմեր 360.105մլ, սակայն ցույց է տրվել

460.105մլ /տարբերությունը 100 մլ. / իսկ դեկտեմբեր ամսին՝ 619.305մլ, սակայն ցույց է տրվել 678.025մլ /տարբերությունը 58.72մլ/: Ըստ դեկտեմբեր ամսվա հաշվետվության մնացորդը 31.12.2020թ. դրությամբ կազմել է 660.65 մլ.: Թվաբանական վերահաշվարկի արդյունքում մնացորդը պետք է կազմեր 664.69 /618.05+2730-2683.36/: Տարբերությունը 4.04 մլ: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվում է որ Լոռու մարզային կառույցում առանձին սյունակով ծախս է համարվում նաև այսպես կոչված ստուգիչը, որը տարվա ընթացքում կազմել է 21.6 մլ: Նշված ստուգիչի ծախսը որևէ կարգով սահմանված չէ և չի ընդունվում որպես ծախս:

Ծանոթություն 10. Ըստ փաստաթղթերի Սյունիքի մարզային կառույցի մնացորդը 01.01.2020թ. դրությամբ կազմում է 991.731 մլ: 10.04.2020թ. կենտրոնական պահեստից կառույցը ստացել է 1140 մլ, որից 500 մլ 2019թ ձեռք բերվածից, իսկ 640 մլ 2020թ. ձեռք բերվածից, սակայն հաշվետվությամբ մուտք է եղել 1090մլ, կամ մուտքը 50մլ պակաս է ցույց տրվել:

Ծանոթություն 11. Սյունիքի մարզային կառույցը 01.10.2020թ. Շիրակի մարզային կառույցից ընդունման-հանձնման ակտով ստացել է 100մլ հակածին: 2020թ. ընթացքում ծախսը կազմել է 1,896.27 մլ: Ըստ հաշվետվությունների 31.12.2020թ. դրությամբ մնացորդը կազմում է 285.461, սակայն ծախսերի հաշվարկով այն պետք է կազմի 335.461 մլ. /991.731+1140+100-1896.27/: Նշված 50 մլ տարբերությունը կազմում է ՀԱԲԼԾԿ-ի պահեստից ելքագրման ակտով ստացված 1140 մլ չմուտքագրված 50 մլ հակածինը:

Ծանոթություն 12. Արմավիրի մարզային կառույցի կողմից ներկայացված հաշվետվությամբ դեկտեմբերի ամսվա վերջին մնացորդը կազմում է 652.395 մլ, սակայն թվաբանական վերահաշվարկի արդյունքում պետք լինի 752.375 մլ: Նշված 100 մլ տարբերությունը կազմում է 01.12.2020թ. ընդունման-հանձնման ակտով Վայոց-Ձորի մարզային կառույցին փոխանցված 100 մլ հակածնի քանակը, որը չի արտացոլվել Արմավիրի մարզային կառույցի հաշվետվությունու, որպես ելք:

Ծանոթություն 13. Արարատի մարզային կառույցում ըստ 01.01.2020թ. հաշվետվության մնացորդը կազմում է 1609.24 մլ: Մարզային կառույցը մարտ ամսին ստացել է 2010 մլ հակածին, որից 500 մլ 2019թ. ձեռք բերվածից, իսկ 1510 2020թ. ձեռք բերվածից: Կառույցի 2020թ. ծախսը, ըստ հաշվետվությունների կազմել է 1230.62 մլ, մնացորդը 31.12.2020թ. կազմել է 913.555: Սակայն ըստ հաշվետվության ելքերի /ծախսերի/ թվաբանական վերահաշվարկի մնացորդը պետք է լինի 2388.62 մլ /1609.24+2010-1230.62/, տարբերությունը 1475.065 մլ: 2020թ. հունվար ամսվա համար հաշվեքննության ընթացքում ներկայացվել է երկու հաշվետվություն՝ առաջինի դեպքում 01.01.2020թ. դրությամբ մնացորդը կազմել է 1609.24 մլ, իսկ երկրորդի դեպքում՝ 151 մլ: Նշված անհամապատասխանության վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի կողմից տրամադրվել է տեղեկանք /պարզաբանում/,

համաձայն որի Արարատի մարզային կառույցի 01.01.2020թ. դրությամբ առկա 1609.24 մլ. հակաձնից 1458 մլ. հակաձինը եղել է 2018թ. ձեռք բերվածից է և արդեն իսկ 01.01.2020թ. դրությամբ եղել է ժամկետանց և հաշվառվել է 01.01.2020թ. դրությամբ ամբողջ համակարգի 2018թ. ձեռք բերված ժամկետանց 7007, 16 մլ քանակի մեջ: Իրական մնացորդը /պիտանի/ 01.01.2020թ. դրությամբ պետք է կազմեր 151 մլ:

Ծանոթություն 14. Արարատի մարզային կառույցում /ք. Արտաշատ/ իրականացված հաշվարկի արդյունքում պարզվեց, որ 2018թ. ձեռք բերված ժամկետանց հակաձնի քանակը փաստացի կազմում է 930 մլ /հիմք՝ Արարատի մարզային կառույցի ղեկավարի ժ/պ կողմից տրված գրություն/: Նշված 930 մլ. մնացորդի արժանահավատությունը ստուգելու համար, վերահաշվարկ է կատարված նաև Արարատի մարզային կառույցի 2018-2019թթ. Ռոզ-Բենգալ հակաձնի շարժի հաշվետվությունները: Արդյունքում պարզվել է, որ 2018թ. ձեռք բերված հակաձնից 01.05.2019թ. դրությամբ մնացորդը արդեն իսկ կազմել է 162.46 մլ: Արդյունքում առկա է տարբերություն Արարատի մարզային կառույցի երկու հաշվետվությունների, ՀԱԲԼԾԿ-ի կողմից տրված տեղեկանքի /պարզաբանման/ և Արարատի մարզային կառույցում գտնվող ժամկետանց հակաձնի քանակների միջև: Վերահաշվարկի արդյունքում, 31.12.2020թ. պիտանի մնացորդը պետք է կազմի 1458.62 մլ /2388.62-930/: Կամ 31.12.2020թ. դրությամբ հաշվետվությամբ որպես մնացորդ պակաս է ցույց տրվել 545.065 մլ /1458.62-913.555/ հակաձին:

Ծանոթություն 15. 31.12.2020թ. դրությամբ ըստ մարզային կառույցների և կենտրոնական պահեստի շարժի հաշվետվության, մնացորդը կազմում է 8292,996 /1890մլ կենտրոնական պահեստի մանցորդ-6402,996 մլ մարզային կառույցների մնացորդ/ մլ հակաձին: Ըստ հաշվեքննողների 31.12.2020թ. դրությամբ մնացորդը պետք է կազմի 10148.021 մլ հակաձին /2020 կենտրոնական պահեստի մնացորդ՝ 1890+130 Տավուշի մարզի վերադարձ+8128,021 մլ մարզային կառույցների մնացորդ/ հակաձին:

Այսպիսով, 31.12.2020թ. դրությամբ, համաձայն մարզային կառույցների հաշվետվությունների մնացորդների և ՀԱԲԼԾԿ-ի պահեստի շարժի հաշվետվության մնացորդի վերահաշվարկի արդյունքում հակաձնի մնացորդը կազմում է 10,148.02 /8128,021+2020/ մլ: Հաշվի առնելով վերոգրյալ ծանոթությունները համակարգում առկա մնացորդների և հաշվետվությամբ ներկայացված մնացորդների տարբերությունը կազմում է 1855,025 մլ /10,148.02-8,292.99/ մլ ավելցուկ, կամ 366.60 հազ. դրամ /1,855.025x197.64/:

Հաշվի առնելով, որ առկա է ռոզբենգալ հակաձնի ավելցուկ 1,855.02 մլ չափով, դա հանգեցնում է փորձաքննությունների ընդհանուր թվի թերազնահատմանը, քանի որ հակաձինը սահմանված չափով պետք է

օգտագործվել յուրաքանչյուր փորձաքննության ընթացքում: Արդյունքում, ավելցուկ հակաձնի քանակի ու խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների փորձաքննություններում օգտագործվող հակաձնի միջին չափաքանակի հարաբերակցությամբ որոշվել է թերակատարված փորձաքննությունների քանակը, որը կազմում է 92,751 (1,855.02*50): Հետևաբար, փորձաքննության դիմաց ՀԱԲԼԾԿ-ին վճարվող գումարը խեղաթյուրված է 29,883.44 հազ. դրամ (92,751*322.19):

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2020 թվականին, ինչպես նաև նախորդ տարիներին, Նախարարության կողմից ախտորոշիչների (ռոզ-բենգալ, էյկոզ) տրամադրումը ՊՈԱԿ-ին իրականացվել է բացառապես ընդունման-հանձնման ակտերով, որտեղ ընդհանուր առմամբ նշված է, թե ինչ քանակությամբ և գնով ախտորոշիչ է հանձնվում: Նշված գործընթացի վերաբերյալ որևէ այլ իրավական ակտ չի կազմվել: Այսինքն, բացակայում է այն իրավական ակտը, որով պետք է սահմանվի հանձնվող ախտորոշիչի նպատակը, հանձնողի և ընդունողի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ընդունող կողմի հաշվետվողականությունը՝ ամրագրելով հաշվետվությունների կազմման ձևաչափը և ներկայացման ժամկետները: ՊՈԱԿ-ը հաշվետվությունները ներկայացրել է սեփական նախաձեռնությամբ մշակված ձևաչափով, որոնք ընդունվել են Նախարարության կողմից:

Հաշվետվությունների առկա ձևաչափը թույլ չի տալիս ՊՈԱԿ-ի մարզային կառույցների կողմից հետ վերադարձված ախտորոշիչը մուտքագրել հաշվետվության «Մուտք» սունյակում, քանի որ դա Նախարարության կողմից դիտարկվում է որպես ախտորոշիչի ձեռքբերում և անհամապատասխանություններ է առաջացնում Նախարարության հաշվառման տվյալներում: Դա է պատճառը, որ ՊՈԱԿ-ի Տավուշի և Կոտայքի մարզային կառույցներից հետ վերադարձված ախտորոշիչները չեն ներառվել (մուտքագրվել) պահեստի շարժի հաշվետվություններում:

2020 թվականին ՊՈԱԿ-ում ռոզ-բենգալ ախտորոշիչի շարժը ներկայացված է հավելված աղյուսակում՝ կից պարզաբանումներով:

Պարզաբանում N 1. ՊՈԱԿ-ի Հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս լաբորատորիայի (ք. Երևան, Դ. Մալյան 37) կողմից 2020 թվականի հոկտեմբերի 01-ի հանձնման-ընդունման ակտով Շիրակի մարզային կառույցի կողմից ստացված 100 մլ ռոզ-բենգալ ախտորոշիչը հաշվետվության մեջ որպես մուտք ուղղակի չի արտացոլվել, որը զուտ տեխնիկական վրիպակի արդյունք է:

Պարզաբանում N 2. ՊՈԱԿ-ի Տավուշի մարզային կառույցի կողմից 2020 թվականի ապրիլի 02-ին գլխավոր պահեստ հետ վերադարձված 130 մլ քանակությամբ ռոզ-բենգալ ախտորոշիչը եղել է պիտանելության ժամկետի մեջ, սակայն վերջինս լաբորատոր ախտորոշման համար հանդիսացել է ոչ պիտանի. հանձնման-ընդունման ակտի մեջ առկա է տեխնիկական վրիպակ՝ «ժամկետանց» բառի փոխարեն պետք է լիներ «շահագործման համար ոչ պիտանի»:

Պարզաբանում N 3. ՊՈԱԿ-ի Արագածոտնի մարզային կառույցում ստուգման արդյունքներով 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ռոզ-բենգալ ախտորոշիչի 864,225 մլ առկա մնացորդն իր մեջ ներառում է նաև 222.335 մլ ժամկետանց ռոզ-բենգալ ախտորոշիչ, որը պահեստ է վերադարձվել 2021 թվականի մարտի 16-ին: Ինչ վերաբերում է հաշվետվության ձևաչափին, ապա վերջինս արդեն իսկ ենթարկվել է անհրաժեշտ փոփոխությունների՝ մարզային ստորաբաժանումներում ՊՈԱԿ-ի գործունեության իրական պատկերն առավել հստակ և արժանահավատ արտացոլելու համար:

Հարկ է նշել նաև, որ ՊՈԱԿ-ը նախատեսում է մարզային կառույցների ղեկավարների հետ անցկացնել ուսուցողական դասընթացներ ստուգման ժամանակ առաջացած թերությունները հետազայում բացառելու նպատակով:

Պարզաբանում N 4. ՊՈԱԿ-ի Կոտայքի մարզային կառույցի կողմից 2020 թվականի հաշվետվություններում արտացոլված 15.9 մլ ռոզ-բենգալ ախտորոշիչի ծախսն, ըստ էության, համապատասխանում է իրականությանը, որը պայմանավորված է փորձաքննության յուրահատկություններով: Նշված խնդիրը համակարգային է և պահանջում է օրենսդրական կարգավորում՝ կապված ախտորոշիչի օգտագործման ժամանակ առաջացած բնական կորուստների հետ:

Պարզաբանում N 5. ՊՈԱԿ-ի Շիրակի մարզային կառույցից ելքագրված 200 մլ ռոզ-բենգալ ախտորոշիչը 2020 թվականի հոկտեմբեր ամսվա հաշվետվության մեջ արտացոլվել է որպես ք. Երևան տեղափոխված այն տրամաբանությամբ, որ ախտորոշիչը փաստացի բերվել է կենտրոնական լաբորատորիա (ք. Երևան, Էրեբունի 12), որտեղից նույն օրը տրամադրվել է Հատուկ վտանգավոր ախտածինների ռեֆերենս լաբորատորիային և Սյունիքի մարզային կառույցին:

Պարզաբանում N 6. ՊՈԱԿ-ի Լոռու մարզային կառույցի կողմից ներկայացված 2020 թվականի հուլիս և դեկտեմբեր ամիսների հաշվետվություններում իրապես առկա են տեխնիկական սխալներ և վրիպակներ, սակայն 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամսական հաշվետվությունում ռոզ-բենգալ ախտորոշիչի մնացորդը համապատասխանում է իրականությանը՝ անակախ ախտորոշիչի բնական կորստը ծախսի մեջ ներառելու

հանգամանքից, որի մասով բացատրությունը ներկայացված է Պարզաբանում N 4-ում:

Պարզաբանում N 7. ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային կառույցին 2020 թվականին հատկացվել է 1240 մլ ռոզ-բենգալ ախտորոշիչ, որից 1140 մլ-ն՝ կենտրոնական պահեստից, 100 մլ-ն՝ Շիրակի մարզային կառույցից: Սակայն համապատասխան ամսական հաշվետվությունների մեջ առկա վրիպակի պատճառով ստացված աշտորոշիչի լրիվ ծավալը չի արտացոլվել. 1140 մլ-ի փոխարեն արտացոլվել է 1090 մլ:

Պարզաբանում N 8. ՊՈԱԿ-ի Արմավիրի մարզային կառույցից Վայոց Ձորի մարզային կառույցին 2020 թվականի դեկտեմբեր ամսին հատկացված 100 մլ ռոզ-բենգալ ախտորոշիչը որպես ելք չի արտացոլվել հաշվետվության աղյուսակային մասում (հաշվետվության ձևաչափի պատճառով), սակայն ծանուցման ձևով ներկայացվել է հաշվետվության ներքևի հատվածում՝ համապատասխան գրառմամբ:

Պարզաբանում N 9. ՊՈԱԿ-ի Արարտի մարզային կառույցում 1458 մլ քանակությամբ ժամկետանց ռոզ-բենգալ ախտորոշիչը փաստացի առկա է, որից 930 մլ-ն գտնվում է ք. Արտաշատում, իսկ 528 մլ-ն՝ ք. Արարատում, որը Հաշվեքննիչ պալատի կողմից փաստացի չի արձանագրվել:

Արարատի մարզային կառույցի կողմից ներկայացված ճշգրտված հաշվետվությունների համաձայն 2020 թվականի հունվարի 01-ի դրությամբ պիտանելիության ժամկետը չլրացած ռոզ-բենգալ ախտորոշիչի մնացորդը կազմել է 151 մլ, մուտքը՝ 2010 մլ, ծախսը՝ 1247.45 մլ, չնայած այն հանգամանքին, որ ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքով ծախսը ներկայացվել է 1230.62 մլ, քանի որ Հաշվեքննիչ պալատը որպես հիմք չի ընդունել սեպտեմբեր ամսվա ճշգրտված հաշվետվությունը, որտեղ առկա է ախտորոշիչի ծախս 16.83 մլ-ի (1247.45-1230.62) չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ռոզ-բենգալ ախտորոշիչի մնացորդը 01.01.2020 թվականի հունվարի 01-ի դրությամբ կազմում է 14088.31 մլ:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված պարզաբանումները հաստատում են հաշվեքննությամբ արձանագրված փաստերը այն իմաստով, որ մարզային կառույցների հաշվետվությունները կազմված են սխալներով և թերություններով: Ինչ վերաբերվում է 9-րդ մասով ներկայացված պարզաբանմանը՝

Արարատի մարզային կառույցի սեպտեմբեր ամսվա՝ որպես ճշգրտված հաշվետվություն, հաշվեքննության ընթացքում չի տրամադրվել: Ինչ վերաբերվում է գույքագրման արդյունքներին, ապա ՀԱԲԼԾԿ-ի կողմից հաշվեքննությանը տրամադրված պարզաբանման /տեղեկանք/ համաձայն, 1458 մլ ժամկետանց հակաձինը գտնվել է քաղաք Արտաշատում, ուստի և մնացորդի առկայության ճշտման նպատակով այցելություն է կատարվել միայն Արարատի մարզային կառույցի կետրոն քաղաք Արտաշատ:

Եզրակացություն

31.12.2020թ. դրությամբ համակարգում առկա մնացորդների և հաշվետվությամբ ներկայացված մնացորդների տարբերությունը կազմում է 1,855,02 մլ /10,148.02-8,292.99/ մլ ավելցուկ, կամ 366.60 հազ. դրամ /1,855.02x197.64/: Հաշվի առնելով, որ առկա է ռոզբենգալ հակաձնի ավելցուկ, դա հանգեցնում է փորձաքննությունների ընդհանուր թվի թերագնահատմանը, քանի որ հակաձինը սահմանված չափով պետք է օգտագործվեր յուրաքանչյուր փորձաքննության ընթացքում: Արդյունքում, ավելցուկ հակաձնի քանակի ու խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների փորձաքննություններում օգտագործվող հակաձնի միջին չափաքանակի հարաբերակցությամբ որոշվել է թերակատարված փորձաքննությունների քանակը, որը կազմում է 92,751: Հետևաբար, փորձաքննության դիմաց ՀԱԲԼԾԿ-ին վճարվող գումարը խեղաթյուրված է 29,883.44 հազ. դրամ:

22. 1116 Ծրագրի 11003 Միջոցառման շրջանակներում ՀԱԲԼԾԿ-ում 01.01.2021թ. դրությամբ հակաձնի մնացորդների վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում հաշվետվություններով ներկայացված հակաձնի շարժի և գույքագրման արդյունքների համադրմամբ:

ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2020թ. դրությամբ տարեվերջյան գույքագրում չի իրականացվել:

Հաշվեքննության ընթացքում, կենտրոնական պահեստում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հատկացված ախտորոշիչների /հիմնականում Ռոզ-Բենգալ հակաձնի/ 08.04.2021թ. դրությամբ գույքագրում: Գույքագրմամբ արձանագրվել է՝

Աղյուսակ 4

Անվանում	Ըստ 2020թ. պահեստի շարժի հաշվետվության		Ըստ 08.04.2021թ. գույքագրման արդյունքների		անհամապատասխանություն	
	2018թ. համար ձեռք	2019թ. համար ձեռք	2018թ. համար ձեռք	2019թ. համար ձեռք	2018թ. համար ձեռք	2019թ. համար ձեռք

	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.06.2019թ/	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.07.2020թ/	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.06.2019թ/	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.07.2020թ/	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.06.2019թ/	բերվածից /պիտանելիության ժամկետը 01.07.2020թ/
	մլ	մլ	մլ	մլ	մլ	մլ
Ռոզ Բենգալ հակածին	1982.53	1890	3460	3340	998 ավելցուկ	797.665մլ ավելցուկ

Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կենտրոնական պահեստի Ռոզ-Բենգալ հակածնի շարժի հաշվետվության 31.12.2020թ. դրությամբ 2018թ. ձեռք բերված հակածնի մնացորդը կազմել է 1982.53 մլ., իսկ 2019թ. ձեռքբերվածից հակածնի չբաշխված մնացորդը կազմել է 1890 մլ.:

Ըստ ժամկետանց ախտորոշչի հանձնման-ընդունման ակտերի Կոտայքի մարզային կառույցից 06.08.2020թ. վերադարձվել է 2018թ. ձեռք բերված ժամկետանց 480 մլ. հակածինը, որը չի արտացոլվել որպես մուտք կենտրոնական պահեստ:

02.04.2020թ. Տավուշի մարզից հետ է վերադարձվել 130 մլ հակածին, որի պիտանելիության ժամկետը լրանում էր 01.07.2020թ. /վերադարձվել է երեք ամիս շուտ/, որը նույնպես չի արտացոլվել որպես մուտք կենտրոնական պահեստ:

16.03.2021թ. Արագածոտնի տարածքային ստորաբաժանումից հետ է վերադարձվել 222.335 մլ 2019թ. ձեռք բերված հակածնից:

06.04.2021թ Կոտայքի մարզային ստորաբաժանումից հետ է վերադարձվել ` 300 մլ 2019թ. ձեռք բերված հակածնից:

Հետևաբար ճշգրտված հաշվապահական մնացորդը գույքագրման պահին, ըստ ճշգրտված հաշվապահական մնացորդը կենտրոնական պահեստում 2018թ. ձեռքբերված հակածնից ժամկետանց հակածնի քանակը պետք է լիներ 2,462.53 մլ. հակածին /1,982.53+480/, սակայն գույքգրվել է 3,460 մլ. հակածին, այսինքն 998 մլ. ավելցուկ:

Ճշգրտված հաշվապահական մնացորդը գույքագրման պահին, ըստ հաշվետվությունների և ընդունման-հանձնման ակտերի կենտրոնական պահեստում 2019թ. ձեռքբերված հակածնից ժամկետանց հակածնի քանակը պետք է լիներ` 2,542.335 մլ /1,890+130+222.335+300/, մինչդեռ փաստացի գույքագրվել է 3,340 մլ. հակածին, այսինքն 797.665 մլ ավելցուկ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԲԼԾԿ-ի համակարգում /մարզային ստորաբաժանումներում/ հակաձնի հաշվառումը չի կատարվել ըստ ստացման տարեթվերի և հաշվեքննողները չունեն բավարար հիմք պարզելու, թե ստացված ավելցուկը իրականում 2019 թ. թե 2020 թ.-ի գործունեությունից է առաջացել, ուստի հաշվարկը կատարվում է 2020 թ. պայմանագրով նախատեսված գներով:

Արդյունքում, նշված ավելցուկ հակաձնի քանակի՝ խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների փորձաքննություններում օգտագործվող հակաձնի միջին չափաքանակի հարաբերակցությամբ որոշվել է թերակատարված փորձաքննությունների քանակը, որը կազմում է 39,883.25 հատ /797.665*50/: Հետևաբար փորձաքննության դիմաց ՀԱԲԼԾԿ-ին վճարվող գումարը խեղաթյուրված է 12,849.98 հազ. դրամ /39,883.25*322,19 դրամ/:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 08-ի N 2-Ն հրամանի Հավելվածի 5-րդ կետի 1) ենթակետի կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները ենթակա են պարտադիր գույքագրման տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ՝ հոկտեմբերի 01-ից ոչ շուտ: Սակայն ՊՈԱԿ-ի կողմից գույքագրման իրականացումը վերոնշյալ իրավական ակտի դրույթներին համապատասխան հնարավոր չի եղել՝ պայմանավորված համավարակով և ՀՀ-ում ռազմական դրությամբ:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտը ըստ էության չի առարկել հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Եզրակացություն

Առկա է խեղաթյուրում հաշվետվություններով ներկայացված հակաձնի շարժի և գույքագրման արդյունքների միջև:

Առաջարկություն

Առաջարկում ենք ՀԱԲԼԾԿ-ին առաջացած տարբերությունների մասով կատարել համապատասխան հաշվապահական ձևակերպումներ:

5 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

23. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր մոնիթորինգի վերաբերյալ

«Այս պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այս գլխում այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի փարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 4,941,047.70 հազ. դրամ, իսկ դրամարկղային ինչպես նաև փաստացի ծախսերը կազմել են՝ 4,941,047.01 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանի և փաստացի փարբերությունը կազմել է՝ 0.69 հազ. դրամ:

Կրկնվող կետ

Ծրագիրն ուղղված է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (միասին՝ տնտեսվարողներ), առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այս գլխում այսուհետ՝ ՖԿ), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը (այս գլխում այսուհետ՝ ԳՖԿ):

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-Լ որոշման (այս գլխում այսուհետ՝ Որոշում) Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է Նախարարության՝ Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից, վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ Նախարարության համապատասխան վարչության կողմից մոնիթորինգ իրականացնելու համար որևէ հաստատված ընթացակարգ չկա: Հետևաբար ողջ ընթացակարգը իրականացվում է չկանոնակարգված ձևաչափով: Համաձայն վարչության ղեկավարի՝ մոնիթորինգն իրականացվում է երկու փուլով՝ առաջնային և երկրորդային: Առաջնային փուլի գործընթացն իրականացվում է մարզային կենտրոնների աշխատակիցների միջոցով՝ կատարելով այցելություններ ընտրանքում ներառված վարկառու տնտեսվարողներին: Արդյունքում կազմվում է մոնիթորինգի հարցաթերթիկ, որն ուղարկվում է վարչությանը: Իրականացված մոնիթորինգի արդյունքներն ամփոփվում և վերստուգվում են Նախարարության վարչությունում, որից հետո անհրաժեշտության դեպքում իրականացվում է երկրորդային մոնիթորինգ:

Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր նաև, որ երկրորդային մոնիթորինգը չի փաստաթղթավորվում, ինչպես նաև նախատեսված չէ գործընթաց այն դեպքում, երբ որևէ առաջնային մոնիթորինգի գործընթաց գնահատվել է անբավարար, ինչը հսկողության գործընթացի թերացում է: Վեց ամիսների հաշվեքննության շրջանակում պարզվել էր, որ Նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից տրամադրվել է պարզաբանում առ այն, որ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մոնիթորինգի իրականացման համար մշակվել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի» շրջանակում վարկառուների կողմից վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգ, որը շրջանառվել է Նախարարության ստորաբաժանումներում: Այժմ գտնվում է ստացված կարծիքների ամփոփման փուլում: Նախատեսվում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը հաստատել Նախարարի հրամանով: Ինչը ամիսների հաշվեքննության շրջանակում պարզվել էր, որ վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը մշակված է, սակայն դեռևս չի հաստատվել:

12 ամիսների հաշվեքննության արդյունք

Վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիթորինգի իրականացման կարգի նախագիծը մշակված է, սակայն դեռևս չի հաստատվել: Նախատեսվում է 2021 թվականի 1-ին կիսամյակում հաստատել:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

12.05.2021 դրությամբ հիշյալ կարգի նախագիծը չի հաստատվել նախարարության կողմից: 12.04.2021 թվականի Վարչապետի որոշման և վերջինիս կիրառության արդյունքում անհնար է դառնում նման կարգով սահմանված գործողությունների իրականացումը գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության կողմից:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ըստ էության չի առարկվել արձանագրված բացթողումը:

24. 1022-12001՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի Վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ

Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ որոշ վարկառու տնտեսվարողների գործունեությունը ժամանակավոր դադարեցված է՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգի կամ վերջիններս հաշվառումից հանված են: Առաջին եռամսյակի հաշվեքննության ընթացքում պարզվել էր նաև, որ մի շարք տնտեսվարողների մասով առկա է ռիսկ՝ կապված վարկային միջոցների նպատակային օգտագործման հետ, որոնց մասով 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության (այս գլխում այսուհետ՝ Վարչություն) կողմից չի իրականացվել մոնիթորինգ: Ի լրումն՝ Վարչության 2020 թվականի ընթացքում մոնիթորինգի ենթակա տնտեսվարողների ընտրանքում ներառվել են միայն 6 իրավաբանական և անհատ ձեռնարկատեր: Վեց ամիսների հաշվեքննության շրջանակում Նախարարության կողմից տրամադրվել էր պարզաբանում առ այն, որ՝

1. Սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտների /վարկառուների/ միասնական ռեգիստրի ստեղծումը դեռևս հնարավոր չէ իրականացնել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով: Միասնական ռեգիստր ստեղծելու հարցը կքննարկվի համապատասխան ռեսուրսների առկայության պայմաններում:

2. Ցանկում նշված վարկառուները, որոնց գործունեությունը համաձայն ՊԵԿ էլեկտրոնային համակարգի ժամանակավորապես դադարեցված է, դեռևս հիմք չի հանդիսանում, որ առկա է ռիսկ վարկերի նպատակային օգտագործման հետ կապված: Քանի որ համաձայն ՀՀ Կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի վարկերի վարկունակությունը գնահատվում է ֆինանսական հաստատությունների կողմից և ծրագրով ամրագրված չէ, որ եթե իրավաբանական անձը ժամանակավորապես դադարեցնում է գործունեությունը ուստի դա հանգեցնում է վարկի նպատակային օգտագործման ռիսկերի և կարող է դադարեցվել սուբսիդավորումը: Ավելին ներկայացված ցանկի ուսումնասիրությունից հետո պարզ էր դարձել, որ ցանկում առկա բոլոր վարկառուների վարկերը նպատակային են օգտագործվել՝ համաձայն ֆինանսական կառույցների մոնիթորինգների եզրակացության: Ինչը ամիսների հաշվեքննության ընթացքում պարզվել էր, որ առայժմ սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտների /վարկառուների/ միասնական ռեգիստրի ստեղծումը դեռևս հնարավոր չէ իրականացնել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով, ինչպես նաև Վարչության կողմից 2019 թվականի 4-րդ եռամսյակի և 2020 թվականի 1-ին կիսամյակի վարկառուներից 695 ընտրված վարկառուների տնտեսություններում իրականացվել է վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգ: Մոնիթորինգի արդյունքում բացահայտված ոչ

նպատակային դեպքերը ներկայացվել են գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցին ներկայացնելու և վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցը լրացուցիչ դիտարկելու համար: Սակայն առ այսօր Վարչությանը վերը նշված հարցի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

12 ամիսների հաշվեքննության արդյունք

Ինչ վերաբերում է սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտների միասնական ռեզիստրի ստեղծմանը, ապա ինչպես նախկինում արդեն նշել ենք, միասնական ռեզիստրի ստեղծումը չի իրականացվել՝ անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով: Միասնական ռեզիստր ստեղծելու հարցը կքննարկվի համապատասխան ռեսուրսների առկայության պայմաններում 2021թ. ընթացքում:

Վարչության կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքում վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցի ընթացքի վերաբերյալ պարզվել է որ, ԳՖԿ-ի միջոցով ֆինանսական կառույցներից ստացվել են վերջիններիս մեկնաբանությունները ներկայացված «ոչ նպատակային» և «հիմնականում ոչ նպատակային» դեպքերի վերաբերյալ: Ըստ Ծրագրի՝ վարկի ներդրման ուղղության մասնակի և ամբողջական փոփոխությունները չեն հանդիսանում Ծրագրի դրույթների խախտում, քանի որ վերջնարդյունքում տվյալ վարկերը ներդրվել են գյուղատնտեսության մեջ: Ոչ արժանահավատ դեպքերի վերաբերյալ ֆինանսական կառույցների կողմից ներկայացված մեկնաբանությունները դիտարկելու արդյունքում որոշ դեպքեր Վարչության կողմից համարվել են նպատակային, սակայն թվով 8 վարկառուների ներդրումները շարունակում են հանդիսանալ ոչ արժանահավատ դեպքեր՝ անկախ ֆինանսական կառույցների ներկայացրած մեկնաբանություններից: Վերջին 8-ը ներկայացվել է գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ համապատասխան որոշում կայացնելու:

2020 թվականի ընթացքում ներկայացված 695 վարկառուների շրջանում իրականացված մոնիթորինգի արդյունքներից գատ, 4-րդ եռամսյակում իրականացվել է 150 մոնիթորինգ (2020 թվականի 3-րդ եռամսյակի վարկ ստացածների շրջանակում): Արդյունքում արձանագրվել է «հիմնականում նպատակային» և «նպատակային» ներդրումների շուրջ 130 դեպք, 17՝ «ոչ նպատակային», 2՝ «հիմնականում ոչ նպատակային», իսկ 1-ը՝ ընդհանրապես չի օգտագործել վարկը:

2020 թվականի 4-րդ եռամսյակի վարկառուների մոնիթորինգն իրականացվել է 2021 թվականի մարտ ամսին: Վերջինս գտնվում է տվյալների ստուգման փուլում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2021 թվականի ապրիլի 19-ի N 03/5625-2021 գրությամբ առաջարկվել է կազմակերպել համատեղ քննարկում Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ գյուղական ֆինանսավորման կառույցի և ֆինանսական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում իրականացված վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգի արդյունքում արձանագրված վարկային միջոցների օգտագործման ոչ նպատակային դեպքերի առկայության վերաբերյալ: Վերոնշյալ քննարկումը տեղի է ունեցել սույն թվականի ապրիլի 21-ին Էկոնոմիկայի նախարարի տեղակալ պարոն Խոջոյանի գլխավորությամբ, որի արդյունքում որոշվել է, որ ֆինանսական կառույցները մեկ անգամ ևս ուսումնասիրեն ոչ արժանահավատ դեպքերը և ԳՖԿ-ի միջոցով Նախարարություն ներկայացնեն դրանց արժանահավատությունը հիմնավորող փաստաթղթերը, որից հետո Նախարարությունը կքննարկի և վերջնական արդյունքները կներկայացնի ԳՖԿ-ին:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախարարության Վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում վարկառուների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման հնարավոր դադարեցման հարցի ընթացքի վերաբերյալ պարզվել էր որ, ԳՖԿ-ի միջոցով ֆինանսական կառույցներից ստացվել են վերջիններիս մեկնաբանությունները ներկայացված «ոչ նպատակային» և «հիմնականում ոչ նպատակային» դեպքերի վերաբերյալ: Ոչ արժանահավատ դեպքերի վերաբերյալ ֆինանսական կառույցների կողմից ներկայացված մեկնաբանությունները դիտարկելու արդյունքում որոշ դեպքեր Վարչության կողմից համարվել են նպատակային, սակայն թվով 8 վարկառուների ներդրումները շարունակում են հանդիսանալ ոչ արժանահավատ դեպքեր՝ անկախ ֆինանսական կառույցների ներկայացրած մեկնաբանություններից: Վերջին 8-ը ներկայացվել է գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչությանը՝ համապատասխան որոշում կայացնելու:

Նախարարության, ԳՖԿ-ի և ֆինանսական կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ, վարկերի օգտագործման նպատակայնության մոնիթորինգի արդյունքում արձանագրված վարկային

միջոցների օգտագործման ոչ նպատակային դեպքերի առկայության վերաբերյալ, կազմակերպված համատեղ քննարկման արդյունքում որոշվել էր, որ ֆինանսական կառույցները մեկ անգամ ևս ուսումնասիրեն ոչ արժանահավատ դեպքերը և ԳՖԿ-ի միջոցով Նախարարություն ներկայացնեն դրանց արժանահավատությունը հիմնավորող փաստաթղթերը, որից հետո Նախարարությունը կքննարկի և վերջնական արդյունքները կներկայացնի ԳՖԿ-ին: Հետևաբար այս հարցի մանրակրկիտ ուսումնասիրությունը կկատարվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:

25. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում՝ 11001 միջոցառման վերաբերյալ

«Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2020 թվականի կադարողականի վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ ՀՀ պետական բյուջեի թիվ 1224 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում 2020 թվականի տարեկան ճշգրտված պլանով նախատեսվել է հատկացնել 5,020,489.60 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 4,566,972.32 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,566,972.32 հազ. դրամ:

1224 «Բնակչության սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացում» ծրագրի 11001 «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» միջոցառման համար 2020թ. ընթացքում ծախսվել է 4,566,972.3 հազ. դրամ, որից 803,183.4 հազ. դրամը միայն հյուրանոցային ծառայությունների համար, 2,910,952.8 հազ. դրամը միայն սննդի մատակարարման համար, 796,226.5 հազ. դրամը հյուրանոցային՝ ներառյալ սնունդ ծառայության համար: Տրանսպորտային ծախսերը կազմել են 56,609,5 հազ. դրամ:

Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում ծրագրի հաշվեքննության իրականացման և հաշվեքննություն արդյունքների ամբողջական ամփոփման նպատակով 11.09. 2020թ. N ՀՊԵ-391 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պահանջվել է հյուրանոցային և սննդի մատակարարման ծառայություններ մատուցած ընկերությունների կողմից ներկայացված ծառայության հաշիվները /վավերագրերը/, ինչպես նաև դրանց հիմնավորող փաստաթղթերը, ըստ կազմակերպությունների քանակների, մեկուսացված քաղաքացիների թվի, սննդի մատակարարման թվերի և վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության

կողմից ներկայացված N 09.18.5/13132-20202. գրության համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումից պահանջվել է կեցության և սննդամթերքով ապահովման վերաբերյալ ելակետային տվյալները: Սակայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նշված տեղեկատվությունը չի տրամադրվել, ելակետային տվյալների բացակայության պատճառով:

24.09.2020թ. N ՀՊԵ-405 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջվել է հավելյալ տեղեկատվություն բուժում ստացողների, մեկուսացվածների, բուժհաստատությունների անձնակազմերի վերաբերյալ: Սահմանված ժամկետում տեղեկատվությունը չտրամադրելուց հետո 02.12.2020թ. ՀՊԵ-506 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից ևս մեկ անգամ պահանջվել է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը /համաձայն կից ներկայացվող N 1,2,3 հավելվածների/: ՀՀ առողջապահության նախարարի կողմից 25.01.2021թ. N ԱԱ/001/1056-21 գրությամբ խնդրել է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահին տեղեկատվության տրամադրումը երկարաձգել 15 օրով: Պահանջվող տեղեկատվությունը ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարի 15.03.2021թ. N ԱԱ/06.3/4193-21 գրությամբ: Սակայն տրամադրված տեղեկատվությունը նույնպես թերի է, մասնավորապես բացակայում է հավելված N 2-ով պահանջվող տեղեկատվությունը, այն է 01.03.2020-31.12.2020թթ. ժամանակահատվածի համար կորոնավիրուսով վարակվածների, սակայն բուժում չստացող, կոնտակտավորների և ՀՀ վերադարձացների մեկուսացման վերաբերյալ տեղեկատվությունը ըստ վայրերի և օրերի:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 15.01.2021թ. ՀՊԵ-ԿԱ-06 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից կրկին պահանջվել է վերոգրյալ ծրագրի վերաբերյալ տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ համաձայն 1,2 և 3 հավելվածների: 02.02.2021թ. N 01/531-2021 գրությամբ ներկայացված տեղեկատվություն նույնպես տրամադրվել է թերի /բացակայում են հավելված 1,2,3 պահանջվող տեղեկատվությունը/, հակառակ ՀՀ էկոնոմիկայի նախարարի գրության, ամբողջական տեղեկատվության տրամադրման վերաբերյալ պնդմանը:

Հաշվի առնելով, որ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրով նախատեսվում է իրականացնել երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություն, ուստի և նշված տեղեկատվությունը ամբողջական ստանալու պարագայում 2021թ. ընթացքում հնարավոր կլինի 2020 թ. արդյունքները ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հետագա հաշվեքննությունների ընթացքում:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը տրամադրել է միջոցառման իրականացման համար պահանջված անհրաժեշտ առկա ամբողջ տեղեկատվությունը: Վերլուծական բնույթի առավել մանրամասն տեղեկատվություն նախարարությունում առկա չէ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Այնուամենայնիվ, հավելված 2-ով անհրաժեշտ տեղեկատվությունը, որը վերաբերվում է ՀՀ-ում գործող և որպես մեկուսացման վայրեր օգտագործված հյուրանոցների /հյուրատներ և այլն/ մասին տեղեկությունները պետք է առկա լինեն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում:

26. Ռոզ-Բենգալ հակաձնի բաշխման վերաբերյալ

ՀԱԲԼԾԿ-ի պահեստի հաշվետվությունների համաձայն 01.01.2020թ դրությամբ 2019թ. ձեռք բերված Ռոզ-Բենգալ հակաձնի մնացորդը կազմել է 8,450 մլ: 2020թ. պահեստ մուտք է եղել 17,100 մլ հակաձնի: Մարտ-ապրիլ ամիսների պահեստից մարզային կառույցներ ելքագրվել է 23,660 մլ հակաձնի, որից 6,560 մլ 2019թ. ձեռք բերվածի մնացորդից, իսկ 17,100 մլ 2020թ. ձեռք բերվածը ամբողջությամբ: 2020թ. դեկտեմբեր ամսվա պահեստի հաշվետվության համաձայն մնացորդը կազմել է 1,890 մլ, 2019թ. ձեռք բերվածից, որի պիտանելիության ժամկետը ավարտվել է 01.07.2020թ.:

Ըստ մարզային կառույցների հաշվետվությունների հակաձնի ծախսը իրականացվել է անարդյունավետ, այսինքն ըստ ստացման տարեթվերի հակաձնի բաշխումը չի կատարել, որի արդյունքում ավելի քան 2,914.051 մլ. հակաձնի դարձել է ժամկետանց, քանի որ խախտվել է հանրային հատվածի հաշվապահական ստանդարտի պաշարների գնահատման՝ առաջին մուտք-առաջին ելք մեթոդը: Այսպես.

Աղյուսակ 5

	Մարզ	Մնացորդ 01.01.2020թ. դրությամբ	2020թ. ստացված 2019թ. ձեռք բերվածից	Այլ ելքեր	Ծախսը 01.01.2020- 01.07.2020թթ.	Ծախսը 2020թ. Ձեռք բերվածից	Մնացորդ 2019թ. Ձեռք բերվածից
1	Երևան	82.565	100		116.76		65.805
2	Տավուշ	291.175		130	465.17	173.995	

3	Արագածոտն	534.98	1200		1,512.645		222.335
4	Վայոց Ձոր	14.655	400		383.37		31.285
5	Կոտայք	866.49	1000	480	885.635		980.885
6	Շիրակ	104.175	1000		1714.91	610.735	
7	Լոռի	618.05	730		1,329.275		18.775
8	Սյունիք	991.731	500		996.96		494.771
9	Գեղարքունիք	985.085	1050		2,066.385	31.3	
10	Արմավիր	518.4	80		1161.65	563.25	
11	Արարատ	1,609.24	500		786.71		1322.53
		6616.546	6560		11,419.47	1,379.28	3,136.386

Ինչպես երևում է աղյուսակից մարզային կառույցներում 01.01.2020թ. դրությամբ առկա է եղել 6,616.546 մլ հակածին: Ապրիլ ամսին տեղաբաշխվել է պահեստում մնացած 8,450 մլ հակածնից 6,560 մլ և պահեստում մնացել է 1,890: Երևան քաղաքում և մարզային կառույցներում ընդհանուր տեղաբաշխված է եղել 2019թ. ձեռքբերվածից 13,176,546 մլ հակածին /6,616.546+6,560/, որի պիտանելիության ժամկետը սահմանված է 01.07.2020թ.: Երևան քաղաքի և մարզային կառույցների ընդհանուր ծախսը 01.01.2020թ.-01.07.2020թթ. ժամանակահատվածում կազմել է 11,419.47 մլ: Ճիշտ տեղաբաշխման արդյունքում 2019թ. ձեռք բերվածի մնացորդը կկազմեր 1,757,106 մլ /2019թ. ձեռք բերված մնացորդից 3,136.386 մլ – 2020թ. ձեռք բերվածից ծախս 1,379,28մլ/:

Նշենք նաև, որ մարզային կառույցներից ՀԱԲԾԿ-ի պահեստ է վերադարձվել միայն Արագածոտնի մարզից ամբողջությամբ 222,335 մլ և Կոտայքի մարզից կողմից 300 մլ 980.885 մլ մնացորդից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Ախտորոշիչի բաշխման արդյունավետությունը էականորեն կախված է ԳԾԿ-ի կողմից տրամադրվող նմուշների քանակից. ԳԾԿ-ի կողմից աշխատանքների թերակատարումն իր ուղղակի ազդեցությունն է ունենում ՊՈԱԿ-ի կողմից իրականացման ենթակա փորձաքննությունների քանակի և դրանից բխող ռոզ-բենգալ ախտարաշիչի բաշխման արդյունավետության և ծախսի վրա:

Հարկ է նշել, որ 2020 թվականին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության ախտորոշման նպատակով փաստացի իրականացված լաբորատոր փորձաքննությունները կազմում են ընդհանուր փորձաքննությունների 98.6%-ը (880913x100/893385): Պայմանագրի Հավելված 1-ով որպես պլանային ցուցանիշ սահմանված է տարեկան 1051923 հատ լաբորատոր

փորձաքննությունների իրականացում, որից մոտ 1037196 հատը (98.6%) պետք է կազմեին բրուցելոզ հիվանդության ախտորոշման փորձաքննությունները: Այսինքն, նշված փորձաքննությունների պլանային և փաստացի ցուցանիշների միջև տարբերությունը կազմում է 156283 (1037196-880913) հատ փորձաքննություն: Եթե անգամ ընդունենք, որ այդ փորձաքննությունները վերաբերում են միայն մանր եղջերավոր կենդանիների արյան նմուշների հետազոտմանը, ապա չծախսված ռոզբենգալ ախտորոշիչի քանակը կազմում է 2344.25 մլ (156283x0.015): Իսկ կարճաժամկետ հատվածում ԳԾԿ-ի կողմից նմուշների ոչ բավարար չափով տրամադրման դեպքում ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում են ավելի քիչ քանակով փորձաքննություններ, հետևաբար ծախսվում է ավելի քիչ ախտորոշիչ և առաջանում է պիտանելիության ժամկետը լրացած ախտորոշիչի մնացորդ:

Բոլոր դեպքերում ՊՈԱԿ-ն առաջնորդվել է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով և դրանց հիման վրա 2019 թվականի դեկտեմբերի 27-ին 2020 թվականի համար ՊՈԱԿ-ի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ, որով սահմանված է նյութերի (պաշարների) հաշվառման FIFO (Առաջինը մուտք, առաջինը ելք) մեթոդը:

(սննդամթերքի անվտանգության վարչություն)

Հաշվեքննորդների մեկնաբանություն

Հաշվեքննության արձանագրությունում մանրամասն նկարագրված է հակաձնի շարժը, որով հաստատվում է, որ հակաձնի բաշխումը լիարժեք չի իրականացվել հանրային հատվածի հաշվապահական ստանդարտի պաշարների գնահատման՝ առաջին մուտք-առաջին ելք մեթոդով:

Եզրակացություն

Ըստ մարզային կառույցների հաշվետվությունների հակաձնի ծախսը իրականացվել է անարդյունավետ, այսինքն ըստ ստացման տարեթվերի հակաձնի բաշխումը չի կատարել, որի արդյունքում ավելի քան 2,914.051 մլ. հակաձնի դարձել է ժամկետանց:

**6 ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

N	Անհամապատասխանություն / խեղաթյուրում/ հսկողության գործընթացի թերացում	Վերացված է /վերացված չէ / ընթացքում է	Հիմնավորումներ	Տարեկան հաշվեքննության արդյունք
1.	<p>Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով:</p> <p>Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու որևէ կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականացվել մոնիթորինգ:</p>	Վերացված չէ	Համապատասխան միջոցառումների ծրագրերով նախատեսված մոնիթորինգի աշխատանքների իրականացումը լինելով բավականին ծավալուն, պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ: Ներկայումս նախարարությունում քննարկվում է այս ծրագրերով մոնիթորինգի իրականացման աշխատանքների հնարավոր ձևաչափը և իրականացման մոտեցումները:	<p>Տես կրկնվող կետ 1:</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

2.	<p>«ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունվարի 8-ի թիվ 3-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը: Ըստ հրամանի՝ 08.01.2020թ. դրությամբ նախատեսվում է 446 հաստիքային միավոր, որից 75-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 16%: 01.12.2020թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը կազմում է 449, որից 95-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 21%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 08.01.2020թ. դրությամբ 75 թափուր հաստիքներից 61-ը 01.12.2020թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր:</p> <p>«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել: Պարզվել է, որ ընդունվածների ցանկում առկա են արտահաստիքային կարգով աշխատանքի ընդունված աշխատակիցներ, այն դեպքում երբ, համաձայն հաստիքացուցակի, առկա է եղել թափուր հաստիք նույն պաշտոններով՝</p> <ul style="list-style-type: none"> • Իրավախորհրդատու նախարարի, • խորհրդական մասնագետ 	վերացված չէ	<p>Նշված թվով 9-ը արտահաստիքային աշխատանքային պայմանագրերից 7-ը ներկայումս լուծված են: Մնացած 2-ի՝ ձեռներեցության զարգացման վարչության մասնագետի և գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի հետ կնքված աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգվել են համապատասխանաբար մինչև 2021 թվականի մարտի 31-ը և դեկտեմբերի 30-ը:</p> <p>Չնայած այն հանգամանքին, որ նախարարության հաստիքացուցակում առկա է կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի թափուր հաստիքներ, սակայն հաշվի է առնվել, որ նշված պայմանագրով սահմանված գործառույթները պետք է իրականացվեն որոշակի ժամանակահատվածում և նպատահարմար է համարվել կնքել որոշակի ժամկետով պայմանագիր:</p> <p>Արտահաստիքային «մասնագետ»-ի հետ պայմանագիրը կնքվել է որոշակի ժամկետով՝ քաղաքացիական աշխատանք իրականացնելու համար, իսկ նախարարության հաստիքացուցակում առկա պաշտոնները քաղաքացիական ծառայության պաշտոններ են</p>	<p>Տես կրկնվող կետ 2:</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

3.	<p>Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2020 թվականին Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:</p>	<p>Ընթացքում է</p>	<p>Էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի բաժնի գործունեության դադարեցման գործընթացը իրականացվել է անձնակազմի կառավարման ստորաբաժանման կողմից՝ ՀՀ վարչապետի 06.12.2019 թ. թիվ 1827-Լ որոշման համաձայն՝ (Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 09.03.2020թ. թիվ 352-Ա հրաման):</p> <p>Այնուհետև ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է պայմանով մրցույթ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:</p>	<p>Տես կրկնվող կետ 3:</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

			<p>Ընտրված մասնակցին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով ամրագրված դրույթներին համապատասխան պայմանագրի նախագիծը, որը հաղթող մասնակցի կողմից չի ստորագրվել, հետագայում բողոքարկվել է:</p> <p>Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը՝ գնման գործընթացը կասեցված էր:</p> <p>2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 03.11.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/115 ծածկագրով բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:</p>	
4.	Նախարարության և Հիմնադրամի միջև կնքված Պայմանագրի 2.1.2 կետով սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թ. մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային) հաշվետվության տեքստային մասի ներկայացումը, սակայն ներկայացված հաշվետվությունում Հ-4 հաշվետվությունը բացակայում է:	Ընթացքում է	Ընդունվել է ի գիտություն:	Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:
5.	Հիմք ընդունելով «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և	Ընթացքում է	Ընդունվել է ի գիտություն:	Տես կրկնվող կետ 5:

<p>գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման» ծրագիրը՝ Նախարարության և Հիմնադրամի միջև կնքված Պայմանագրով նախատեսվում է, որ Նախարարությունը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից նախատեսված մոնիթորինգը չի իրականացվել: Այսպիսով արձանագրվել է անհամապատասխանություն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված դրույթների մասով:</p>		<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>
<p>6. Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Հիմնադրամը 2020 թվականի փետրվարի 4-ին կնքել է թիվ P7\04-02\20 պայմանագիրը «Рест7Арт» ՍՊԸ-ի հետ՝ Prowein Dusseldorf գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսում տաղավարի կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար: Ընկերությունը գրանցված է որպես իրավաբանական անձ Ռուսաստանի Դաշնությունում:</p> <p>Առկա է անհամապատասխանություն ՀՀ Գնումների օրենսդրության հետևյալ կետերի հետ.</p> <p>1. «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (Այս գլխում այսուհետ՝ Կարգ)</p>	<p>Վերացված չէ</p> <p>2021թ նախատեսված ցուցահանդեսի իրականացման դեպքում, ամբողջ գործընթացը կկատարվի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն</p>	<p>Տես կրկնվող կետ 6</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>21-րդ կետի 1-ին ենթակետի (է) պարբերության համաձայն, գնման հայտով պետք է հաստատվի կանխավճարի հատկացման հնարավորությունը եւ առավելագույն չափը, իսկ հրավերով հաստատվի կանխավճարի հատկացման եւ դրա առավելագույն չափը, որը Հիմնադրամի կողմից չի կատարվել:</p> <p>2. Հիմնադրամի կողմից Պայմանագրով նախատեսվել է կանխավճարի հատկացման պայման, որը չի համապատասխանում Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պահանջին:</p> <p>3. Հիմնադրամը պայմանագրով սահմանել է 50% կանխավճար, որը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջին, համաձայն որի՝ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը:</p> <p>4. Հիմնադրամը կնքել է պայմանագիր, որը չի համապատասխանում Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասին, համաձայն որի Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:</p>			
7.	Հիմնադրամի կարիքների համար մեկ անձ գնման	Վերացված չէ	Ուսումնասիրելով տվյալ նկատառումը և ՀՀ	Տես կրկնվող կետ 7

	<p>ընթացակարգով կնքված 29 պայմանագրերի ընթացակարգերը ամբողջությամբ չեն իրականացվել Կարգի պահանջների հետ: Մասնավորապես՝ պայմանագրերի կնքելու և կնքված պայմանագրերի հայտարարությունները չեն հրապարակվել ռուսերեն լեզվով:</p>		<p>կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված դրույթները, հարկ ենք համարում նշել, որ դիտարկումն ընդունվել է ի գիտություն և ենթակա է վերանայման</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>
8.	<p>Հիմնադրամի աշխատակիցները 2020թ.-ի հունվար-մարտ ամիսների աշխատավարձը ստացել են 2020թ. ապրիլ ամսին: Նշվածը Հիմնադրամի կողմից պատճառաբանվել է ֆինանսավորման ուշ ստացմամբ: Սակայն, հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Հիմնադրամը Նախարարությանը ծախսերի կատարման հայտ է ներկայացրել 2020թ. փետրվարի 26-ին, իսկ ֆինանսավորվել է 2020թ. մարտի 3-ին:</p> <p>Ի լրումն՝ Հիմնադրամը նաև ուշ է վճարել աշխատակիցների աշխատավարձից պահված եկամտային հարկից գոյացած իր պարտավորությունը, ինչի արդյունքում հաշվարկվել տույժ է 221.98 հազ. դրամի չափով:</p> <p>Հիմնադրամի կողմից ներկայացված բանկային քաղվածքի համաձայն՝ ընթացիկ հաշիվների մնացորդը 31.12.2019թ. դրությամբ կազմում են՝ 17,300.48 հազ. դրամ և 27,914.13 Եվրո, ընդ որում Հիմնադրամի հունվար ամսվա աշխատավարձի փաստացի ծախսը կազմել է 4,287.77 հազ. դրամ:</p>	<p>վերացված չէ</p>	<p>Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2020թ մարտի 23-ի N 381 – Ա որոշմամբ, որից հետո 2020թ մարտի 26-ին հոգաբարձուների խորհրդի միաձայն որոշմամբ հաստատվել է հիմնադրամի 2020թ բյուջեն, այդ թվում՝ հաստիքացուցակը և տարեկան աշխատավարձի ֆոնդը, ինչից հետո վճարվել է հունվար – մարտ ամիսների աշխատավարձը: Օրենսդրության համաձայն՝ հիմնադրամը նաև վճարել է հարկային պարտավորությունները: Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձը վճարվում է պետական բյուջեի միջոցներից և ենթակա չէ այլ աղբյուրներից ֆինանսավորման: Հարկ ենք համարում նշել, որ աշխատավարձի վճարումն իրականացվում է միայն հոգաբարձուների խորհրդի տարեկան աշխատավարձի ֆոնդի հաստատումից հետո, իսկ վճարման ուշացումը պայմանավորված է խորհրդի անհատական կազմի հաստատման աշխատանքների երկարաձգմամբ:</p>	<p>Տես կրկնվող կետ 8</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

<p>9.</p>	<p>ԳԾԿ-ի կողմից 2020 թվականի ընթացքում մոտ 515 անասնաբույժների հետ առանց մրցույթի կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ:</p> <p>Անասնաբույժների և համաճարակաբանների աշխատավարձերը նախատեսվել և վճարվել են տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածով, սակայն նախահաշվով որպես ծառայությունների ձեռք բերում և վճարումը պետք է կատարվեր համապատասխան տնտեսագիտական դասակարգման հոդվածից: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ-ի թիվ 5-Ն հրամանի պահանջների հետ, որով հաստատվել է ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները:</p>	<p>Վերացված չէ</p>	<p>Առկա իրավիճակը բխում է մի շարք խնդրիներից՝ համայնքներում անասնաբույժ մասնագետների 60-70 %-ի տարիքային շեմը գերազանցում է 60 տարեկանը, անասնաբուժական մասնագիտական մասնավոր կազմակերպությունները բավարար բաշխավածություն չեն կարող ապահովել ծրագրի միջոցառումների կատարումն ապահովելու համար, համայնքներում երիտասարդ մասնագետների համար ոլորտը գրավիչ չէ, քանի որ տվյալ գործունեությունը չի համարվում մասնագիտական ստաժ, ամեն ամիս չեն վարձատվում, ընդ որում սահմանված միավորի գինն առաջացնում է դժգոհություն:</p> <p>Տեղեկացնում են, որ առկա հարցը բազմիցս քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, որի ուղղությամբ աշխատանքներ են տարվում:</p> <p><i>(սննդամթերքի անվտանգության վարչություն)</i></p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>
<p>10.</p>	<p>2020 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի կնքման ժամկետի և կատարվելիք միջոցառումների և դրանց հետ կապված վճարումների միջև առկա է անհամապատասխանություն կամ 2020 թվականի մարտ ամսին հակահամաճարակային միջոցառումներ չպետք է նախատեսվեին, քանի որ պայմանագիրը կնքվել է ավելի</p>	<p>Վերացված չէ</p>	<p>Անասնահամաճարակային կայունությունը ապահովելու նպատակով առաջացել է անհետաձգելի պահանջ՝ 2020 թվականի մարտ ամսին սկսվել և իրականացվել է անասնահակահամաճարակային միջոցառումներ, որից ելնելով համայնքային անասնաբույժները ըստ հրահանգի իրականացրել են միջոցառումներ և կազմաձև</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

<p>ուշ:</p> <p>«Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված, առկա է անհամապատասխանություն այն է. «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»:</p> <p>Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 4.2. կետի պահանջների հետ, այն է. «Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր»:</p> <p>Այսինքն, ըստ պայմանագրի, ԳԾԿ-ն իրավունք չունի մարտ ամսին կատարված աշխատանքները ներկայացնել 2020 թ-ի ապրիլ ամսին և վճարվել դրա համար:</p>		<p>կատարողական ակտերը ներկայացրել տարածքային համաճարակաբաններին: Մարտ և ապրիլ ամիսներին իրականացված անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների հաշվետվությունները համաճարակաբանների կողմից ներկայացվել են ԳԾԿ ՊՈԱԿ ապրիլ ամսվա ավարտին միաժամանակ, որը ենթակա է ստուգման և վճարման:</p> <p><i>(սննդամթերքի անվտանգության վարչություն)</i></p>	
<p>11. Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանը 2020 թվականին ընթացքում միաժամանակ աշխատանքային պայմանագրով աշխատել է ԳԾԿ-ում որպես համաճարակաբան և Կոտայքի մարզի Արամաուսի համայնքապետարանում որպես անասնաբույժ: Առկա է անհամապատասխանություն «Աշխատանքային օրենսգրքի» 139-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով սահմանված պահանջներ հետ, այն է «Տարբեր գործատուների կամ նույն գործատուի մոտ երկու և ավելի</p>	<p>վերացված չէ</p>	<p>Հաշվեքննության օբյեկտի կողմից անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում չի տրվել:</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից»:</p>			
<p>12.</p>	<p>Գեղաշեն համայնքում առկա է անհամապատասխանություն կապված պատվաստանյութերը համապատասխան ջերմային պայմաններում պահպանման հետ:</p> <p>Ինչպես նաև առկա է անհամապատասխանություն անասնաբույժի կողմից պահվող մատյանում կատարված գրանցումների հետ:</p>	<p>Վերացված չէ</p>	<p>ԳԾԿ ՊՈԱԿ-ի համապատասխան լիազոր մարմնի կողմից տարվել են բացատրական և լրացուցիչ աշխատանքներ, տրվել են ցուցումներ՝ Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանին, մատյաններում ճիշտ և պատշաճ գրառումներ իրականացնելու և առանց ջնջումների աշխատելու համար: Ըստ Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբան՝ Ա. Հակոբյանի, իր կողմից լրացված մատյաններում կամ կազմված ակտերում սխալները և վրիպումները անուշադրության արդյուն են և չեն պարունակում դիտավորություն, որի համար ստացել է նկատողություն: Ինչ վերաբերվում է անասնաբույժներին տարիներ առաջ տրամադրված սառնարանների սարքինությանը և առկայությանը, այս առումով ԳԾԿ ՊՈԱԿ-ի կողմից տարվում են աշխատանքներ սառնարանային բազան թարմացնելու և համալրելու մասով, միաժամանակ նշեմ, որ ըստ համայնքի անասնաբույժի հետ կնքված քառաքացիաիրավական պայմանագրի, անասնաբուժը պարտավորվում է մատուցել ծառայություն և պատվաստանյութերը պահպանել ըստ հրահանգին համապատասխան ջերմաստիճանով: Հաճախ կարող են լինել այն դեպքերը, որ անասնատերերը պատվատման պահին բացակայում են, և անասնաբուժական գրանցամատյանում կարող են</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

			<p>բացակայել անասնատերերի ստորագրությունները, ինչպես նաև կոռոնավիրուսային համավարակն է հանդիսանում պատճառ անասնատերերի կողմից գրանցամատյանում ստորագրությունների բացակայության:</p>	
<p>13</p>	<p>2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում առողջապահական և լաբորատոր նյութերի գնման գործընթացին հիմնականում մասնակցել և հաղթող են ճանաչվել միևնույն կազմակերպությունները, տվյալ պարագայում հայտարարված թվով 8 առողջապահական և լաբորատոր նյութերի 5 մրցույթներում հաղթող է ճանաչվել «Ագաստ» ՍՊԸ-ն, ընդ որում բոլոր դեպքերում տվյալ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկներում ապրանքի ինքնարժեքը հավասար է շահույթի գումարին, այսինքն տվյալ կազմակերպության շահույթը գնային առաջարկում կազմել է 100%:</p> <p>Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության կողմից ձեռքբերված և ելքագրված առողջապահական և լաբորատոր նյութերի շարժը և պարզվել է, որ 01.04.2020 թվականի դրությամբ պահեստում առկա են ժամկետանց պատվաստանյութեր, օրինակ՝ պահեստում առկա 621,800մլ, 870.47 հազ. դրամ ընդհանուր գումարով թռչունների կեղծ ժանդախտ «H» շտամի կենդանի չոր պատվաստանյութ, որի պիտանելիության ժամկետը ավարտվել է 2020 թվականի հունվար ամսին և այն օգտագործման համար այլևս պիտանի չի եղել: Պիտանելիության ժամկետում չէր</p>	<p>Վերացված չէ</p>	<p>Նախարարությունը չի արձագանքել սույն թվականի դեկտեմբերի 11-ին թիվ ՀՊԵ-ԿԱ-150 գրությամբ ներկայացված «ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2020թ. պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության արձանագրության» սույն կետին:</p>	<p>Տես կրկնվող կետ 13</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>նաև 1600 մլ, գումարով 11.82 հազ. դրամ արժողությամբ, անանսնաբուժության մեջ կիրառվող խոզերի դասական ժանդախտի նկատմամբ կենդանի չորացված պատվաստանյութը: Պետք է նշել, որ ժամկետանց պատվաստանյութերի առկայությունը պայմանավորված է պատվաստանյութերի գնման չափաբաժինների ոչ ճիշտ պլանավորման և օգտագործման ժամկետների հետ:</p>			
14	<p>2020 թվականի փետրվարի 2-ին Նախարարության և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, պատվաստանյութի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել է 2020 թվականի մայիսի 31-ը: «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բանկային երաշխիք 35,000.00 հազ. ՌԴ ռուբլու չափով, որը գործել է մինչև 2020 թվականի հունիսի 26-ը: Սահմանված ժամկետում «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի կողմից պատվաստանյութը չի մատակարարվել, ժամկետը լրանալուց հետո վերջինս դիմել է Նախարարություն և երկարացրել է մատակարարման ժամկետը մինչև 2020 թվականի հունիսի 23-ը, սակայն նշված ժամկետում նույնպես պատվաստանյութը չի մատակարարվել և «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը խզվել է:</p> <p>2020 թվականի հունիսի 24-ին և 25-ին գրություններով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՌԴ «Ցենտր ինվեստ» բանկ որպեսզի բենեֆիցիար պայմանագրի ապահովման և որակի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված</p>	վերացված չէ	<p>Սույն ընթացակարգի շրջանակներում պատվիրատուի կողմից երաշխիքային ժամկետում բանկին ներկայացվել է պայմանագրի և որակավորման ապահովման կատարման պահանջ, ինչը սակայն բանկի կողմից անհիմն մերժվել է, սակայն պատվիրատուի կողմից բանկին ներկայացվել է նոր 09.18.11/11492-2020 գրությունը, որում հստակ նշված է բանկի մերժման անհիմն լինելը:</p>	<p>Տես կրկնվող կետ 14</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>267,190.00 հազ. դրամ դրամի փոխհատուցման պահանջ գումարը գանձապետական հաշվին փոխանցելու համար, սակայն այն չի փոխանցվել, քանի որ «Սկիֆ Ագրոս» ՍՊԸ-ի հետ կնքված և թարմացված պայմանագրի հիման վրա երկարացված մատակարարման ժամկետը ավարտվել է 2020 թվականի հունիսի 23-ին, իսկ բանկային երաշխիքի ժամկետը՝ 2020 թվականի հունիսի 26-ին: Այսպիսով, Նախարարությունը չի ունեցել պատշաճ ժամանակահատված բանկային երախիքով նախատեսված գումարը ստանալու համար, քանի որ մատակարարման ժամկետը երկարացնելիս չի պահանջել նաև բանկային երաշխիքի ժամկետի երկարացում:</p>			
<p>15.</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև 10.02.2020թ. կնքվել է թիվ 30-20 պայմանագրը: Համաձայն պայմանագրի 2.3.1 կետի Նախարարությունը ծրագրային միջոցառումների գնահատման նպատակով պետք է իրականացնի մոնիթորինգ: Սակայն, հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ Նախարարության կողմից մոնիթորինգ չի իրականացվել և չեն իրականացվել համապատասխան հսկողության գործընթացներ անհամապատասխանությունները կանխարգելելու կամ բացահայտելու և ուղղելու համար:</p>	<p>Վերացված չէ</p>	<p>Նախարարության հետ կնքված Պայմանագրի շրջանակներում ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի առաջին եռամսյակի կատարողականը ներկայացվել է փաստացի հատկացված գումարին համապատասխան: Քանի որ Պայմանագրը կնքվել է 2020 թվականի փետրվարի 10-ին, իսկ նախատեսված աշխատանքներն, ըստ էության, մեկնարկել են մարտ ամսից, այդ իսկ պատճառով առաջին եռամսյակում հնարավոր չէր ապահովել 100%-ոց կատարողական և ամբողջությամբ փոխհատուցել ՊՈԱԿ-ի հաստատուն ծախսերը (աշխատավարձ, կոմունալ վճարներ և այլն): Գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպման համար անհարաժեշտ էր Պայմանագրով ամրագրել կանխավճարի ձևով որոշակի</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում</p>

			<p>չափի գումարի հատկացում՝ հետագայում փաստացի աշխատանքով փոխհատուցելու պայմանով, հակառակ դեպքում գումարը ենթակա կլիներ հետ վերադարձման Նախարարությանը, ինչը փաստացի չի ամրագրվել: Նշված խնդրի վերաբերյալ ՊՈԱԿ-ը գրավոր տեղեկացրել է Նախարարությանը և 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ առաջացած անհամապատասխանությունն ամբողջությամբ շտկվել է:</p> <p>Ինչ վերաբերում է 2020 թվականի տարեկան կատարողականին, ապա վերջինիս թերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԳԾԿ-ի, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ՊՈԱԿ-ին տրամադրվել են ավելի քիչ լաբորատոր նմուշներ, և փորձաքննություններն իրականացվել են տրամադրված նմուշներին համապատասխան՝ համաձայն պատվերների պահանջի:</p>	
<p>16.</p>	<p>Նախարարություն և ՀԱԲԼԾԿ-ի միջև 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված թիվ 30-20 պայմանագրի շրջանակներում Ծրագրի ծառայությունների մատուցման գործառույթներն իրականացվել են ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի հաստիքային և քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատող աշխատակիցների՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքած աշխատակիցների միջոցով:</p> <p>ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2020թ-ի փետրվար ամսից սկսած</p>	<p>Ընթացքում է</p>	<p>Քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքման գործընթացի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում կազմակերպումն առաջացնում է մի շարք հարցեր, որոնք ունեն պարզաբանման կարիք.</p> <p>1. Ի՞նչպես պետք է ապահովվի ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանումներում (տարածաշրջաններում) պահանջվող քանակի մասնագետների առկայությունը սահմանված ժամկետներում,</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում</p>

	<p>Ծրագրով նախատեսված վճարովի ծառայությունների ձեռք բերման համար 34 քաղաքացիների հետ առանց մրցույթի կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր, շրջանցելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջները:</p>		<p>2. ծախսային ի՞նչ հողվածով պետք է արտացոլվի եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները, քանի որ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված աշխատանքները որպես ծառայություն դիտարկելու պարագայում դրանք տվյալ տարվա բյուջեի նախահաշվում պետք է արտացոլվեն 4241 «Մասնագիտական ծառայություններ» ծախսային հողվածում և վճարվեն այդ հողվածից: Իսկ եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները, որպես կանոն, արտացոլվում են 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» ծախսային հողվածում: Այս դեպքում ստացվում է, որ ՊՈԱԿ-ի՝ տվյալ տարվա համար հաստատված աշխատավարձի ֆոնդի մեջ եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները գերազանցում են հարկային օրենսդրությամբ սահմանված սահմանաչափերը:</p> <p>3. ինչպե՞ս պետք է իրականացվի հաշվապահական հաշվառումը, որպեսզի հնարավոր լինի հարկային հաշվետվությունում արտացոլել եկամտային հարկը և պարտադիր այլ վճարները. ստացվում է, որ ՊՈԱԿ-ը ձեռք է բերում ծառայություններ, որոնք հաշվառում է որպես աշխատանքի վարձատրություն, ինչը հակասում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման վարման կանոններին:</p>	
<p>17.</p>	<p>Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հողվածի ներքո պարզևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում</p>	<p>Վերացված չէ</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցների շրջանակներում նախարարության աշխատողներին</p>	<p>Տես կրկնվող կետ 15: Հարցը</p>

<p>«ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:</p> <p>Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով պարզևատրումների տրամադրման ընթացակարգերը պարզվեց, որ աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ հիմնավորումները բացակայում են: Ավելին, պարզևատման գումարները հիմնական աշխատավարձի գումարների համեմատ կազմում են 20-251 %:</p> <p>Նշենք նաև, որ առկա են դեպքեր, երբ աշխատակիցը ընդունվել է աշխատանքի և նույն ամսվա համար արդեն իսկ ստացել է պարզևատում: Առկա է խեղաթյուրում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ կետի հետ կապված:</p>	<p>պարզևատումները տրվում են նախարարի համապատասխան հրամանների համաձայն, որոնցում հստակ նշվում է նաև պարզևատելու հիմքը՝ «աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու և հատուկ առաջադրանքների կատարման համար», ինչը համարժեք է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում «հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար» ձևակերպմանը: Յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարված որակյալ աշխատանքի փաստաթղթավորված հիմնավորում չի տրվել՝ դրա ձևաչափի օրենսդրական պահանջի բացակայությամբ պայմանավորված, պարզևատումների տրամադրման հաստատված որևէ իրավական ակտով համապատասխան կարգ չի հաստատվել, ինչպես նաև խելամիտ չի համարվել շուրջ 400 աշխատակցի վերաբերյալ անհատական հիմնավորումների կազմումը:</p> <p>(ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչություն)</p>	<p>կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>
<p>18. Հաշվեքննության ընթացքում Հիմնադրամից ստացվել է Նախարարության և Հիմնադրամի միջև 20.02.2020թ. կնքված Պայմանագրի 2.1.2 կետի դրույթներով սահմանված ձև Հ-2, Հ-4 և Հ-8 տարեկան հաշվետվությունները: Հիմնարկի կատարած բյուջետային</p>	<p>վերացված չէ</p>	<p>01.01.2020թ.-31.12.2020թ. ժամանակահատվածի համար Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի փաստացի ֆինանսավորումը կազմել է 237,698.00 հազ. Դրամ, իսկ 2020թ տարեվերջին ՀՀ պետական բյուջե է վերադարձվել Նախարարության</p> <p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

<p>ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2020թ.-31.12.2020թ. ժամանակահատվածի համար ձև Հ-2 Հաշվետվությունում Հիմնադրամը պետական բյուջեից ֆինանսավորում է ստացել 237,698.00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 237,698.00 հազ.դրամ: Սակայն, համաձայն Էկոնոմիկայի նախարարության բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի կատարման մասին հաշվետվության՝ Հիմնադրամը պետական բյուջեից նշված ժամանակահատվածի համար որպես ֆինանսավորում ստացել է 240,648.00 հազ. դրամ, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են՝ 237,698.95 հազ. դրամ: Այսպիսով Նախարարության և Հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև առկա է տարբերություն ֆինանսավորման ցուցանիշներում, որի տարբերությունը կազմում է՝ 2,949.05 հազ. դրամ:</p>		<p>Ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 2,949.05 հազ. դրամ:</p>	
<p>19. Առկա է խեղաթյուրում 2020թ-ի առաջին եռամսյակի համար ներկայացված «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության մասով, քանի որ նշված ժամանակահատվածում կատարվել են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ, սակայն հաշվետվությամբ ծախսը ցույց չի տրվել: 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թիվ 1116 ծրագրի 11003 միջոցառման շրջանակներում կատարվել են 92,659 հատ լաբորատոր փորձաքննություններ, որից 91,539</p>	<p>վերացված չէ</p>	<p>Անասնահամաճարակային կայունությունը ապահովելու նպատակով առաջացել է անհետաձգելի պահանջ՝ իրականացվել է ախտորոշիչ միջոցառումներ մարտ ամսից սկսած և ներկայացվել է ապրիլ ամսվա կատարված ախտորոշիչ միջոցառումների հաշվետվությունների հետ համատեղ, չտարանջատելով երկու ամիսների ընթացքում կատարված միջոցառումները: Անասնաբույժները և համաճարակաբանները հրահանգավորվել են ԳԾԿ ՊՈԱԿ-ի համապատասխան լիազոր մարմնի կողմից:</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>հատը՝ բրուցելոզի և 63 հատը՝ լեյկոզի, հետևաբար նշված լաբորատոր փորձաքննությունների համար ՀԱԲԼԾԿ-ն նմուշները ստացել է ԳԾԿ-ից, սակայն, ինչպես նշեցինք, ԳԾԿ-ն հաշվետվությամբ նշված նմուշառումներն առաջին եռամսյակում ցույց չի տվել և ներկայացրել է կիսամյակային հաշվետվության մեջ:</p>			
<p>20</p>	<p>Կոտայքի տարածաշրջանում անասնաբույժների կողմից իրականացված միջոցառումների և պատվաստանյութերի ծախսի վերաբերյալ կազմված 2020 թվականի մարտ ամսի ակտերը համաճարակաբանների կողմից ամփոփվել էր 2020թ-ի ապրիլ ամսի համար կազմված ամփոփ ակտում:</p> <p>2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում Կոտայքի տարածաշրջանի համաճարակաբանի կողմից ստացված և բաշխված, ինչպես նաև անասնաբույժների կողմից ստացված և ծախսված պատվաստանյութի շարժը, մասնավորապես դաբաղի պատվաստանյութի մասով՝ 16.03.2020թ-ի դրությամբ, պարզվում է, որ պատվաստանյութի ընդամենը 15,900 մլ մնացորդի առկայության պայմանում բաշխվել է 29,300 մլ պատվաստանյութ կամ մնացորդից ավելի բաշխում է ցույց տրվել 13400 մլ, գումարով 944.70 հազ. դրամ, այն դեպքում, երբ պատվաստանյութի հաջորդ խմբաքանակը ստացել է ընդամենը 24.03.2020թ-ին, այն էլ բաշխվածից Ա/մնացորդի հետ միասին/ 200 մլ-ով պակաս: Կատարողական ակտերով ծախսն անասնաբույժների</p>	<p>վերացված չէ</p>	<p>Հաշվեքննության օբյեկտի կողմից պարզաբանումներ չի ներկայացվել:</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>կողմից ցույց է տրվել 14.03-ից սկսած, այն դեպքում, երբ պատվաստանյութի բաշխումը ցույց է տրվել 16.03-ից սկսած:</p>			
<p>21</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև 10.02.2020թ. կնքվել է թիվ 30-20 պայմանագրը Համաձայն պայմանագրի N1 հավելվածի 2020թ. ընթացքում նախատեսվել է իրականացնել 1,051,923 հատ փորձաքննություն, յուրաքանչյուրի միավորի միջին գինը սահմանելով 322.19 դրամ /ներառյալ ԱԱՀ/:</p> <p>Ռիսունասիրվել է մեկ փորձաքննության ինքնարժեքի միջին գինը, որը ըստ ներկայացված հաշվարկի սահմանված է 322.19 դրամ: Արդյունքում պարզվել է, որ ինքնարժեքի հաշվարկի մեջ ներառված է նաև Ռոզ-Բենգալ հակաձնի արժեքը՝ 6 դրամ /օգտագործվում է միայն բրուցելոգի ախտորոշման փորձաքննության ժամանակ/, այն դեպքում, երբ հակաձնի ձեռք է բերվում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից և տրամադրվում է ՀԱԲԼԾԿ-ին անվճար: 2020թ. ընթացքում ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացվել է 483,369 բրուցելոգի ախտորոշման լաբորատոր փորձաքննություն: Ներառելով հակաձնի արժեքը ինքնարժեքի հաշվարկի մեջ առաջանում է խեղաթյուրված հաշվարկ 2,900.20 հազ. դրամ գումարի չափով:</p>	<p>Ընդունելի չէ</p>	<p>Մեկ փորձաքննության գինը (ինքնարժեքը) ճշգրիտ հաշվարկելն ուղղակի անհնար է, քանի որ ՊՈԱԿ-ն իրականացնում է 9-10 տիպի փորձաքննություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան գնագոյացումը: Այս առնչությամբ տվյալ տարվա բյուջեի հաստատումից առաջ ՊՈԱԿ-ի կողմից բազմիցս առաջարկվել է Նախարարությանը վերանայել պայմանագրով սահմանվող գինը և այն ամրագրել ըստ փորձաքննությունների տեսակների, սակայն առաջարկությունը մնացել է անպատասխան: Այդ իսկ պատճառով մեկ միավոր փորձաքննության գինը՝ 322.19 ՀՀ դրամը (ներառյալ ԱԱՀ-ն), սահմանվել է Պայմանագրի ընդհանուր բյուջեն նախատեսված փորձաքննությունների ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով (338,919,400/1,051,923=322.19)՝ որպես Պայմանագրի միջին գին, որը խիստ պայմանական է և ռոզ-բենգալ հակաձնի արժեքի ներառելը կամ չներառելն ինքնարժեքի մեջ որևէ էական ազդեցություն չունի:</p> <p>ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագրի շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակում կենդանիների բրուցելոգ հիվանդության ախտորոշման նպատակով իրականացված 483369 հատ լաբորատոր փորձաքննությունների մեջ ներառվում են նաև ՊՈԱԿ-ի մարզային ստորաբաժանումներից կենտրոնական</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

			<p>լաբորատորիա ուղարկված բրուցելոզ հիվանդությամբ վարակված լինելու կասկածով արյան նմուշների նկատմամբ իրականացված կրկնակի փորձաքննությունները վերջնական հավաստի ախտորոշում կատարելու նպատակով:</p> <p>Հարկ է նշել, որ ցանկացած ծառայության, ապրանքի միավորի ինքնարժեքը հաշվարկելիս պետք է հաշվի առնվեն բոլոր ծախսերը անկախ դրանց փոխհատուցման աղբյուրից:</p> <p>Միաժամանակ առաջարկվում է պարզաբանել Ձեր կողմից ներկայացված մեկ փորձաքննության իրական գնի՝ ինքնարժեքի խեղաթյուրված հաշվարկի բացվածքը, որը կազմել է 2,900.2 հազ. դրամ, քանի որ պայմանագրով սահմանված է պայմանական միջին գին:</p>	
22	<p>31.12.2020թ. դրությամբ համակարգում առկա մնացորդների և հաշվետվությամբ ներկայացված մնացորդների տարբերությունը կազմում է 1,855,02 մլ /10,148.02-8,292.99/ մլ ավելցուկ, կամ 366.60 հազ. դրամ /1,855.02x197.64/: Հաշվի առնելով, որ առկա է ռոզբենգալ հակաձնի ավելցուկ, դա հանգեցնում է փորձաքննությունների ընդհանուր թվի թերագնահատմանը, քանի որ հակաձնինը սահմանված չափով պետք է օգտագործվեր յուրաքանչյուր փորձաքննության ընթացքում: Արդյունքում, ավելցուկ հակաձնի քանակի ու խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր կենդանիների փորձաքննություններում</p>	<p>վերացված չէ</p>	<p>2020 թվականին, ինչպես նաև նախորդ տարիներին, Նախարարության կողմից ախտորոշիչների (ռոզ-բենգալ, լեյկոզ) տրամադրումը ՊՈԱԿ-ին իրականացվել է բացառապես ընդունման-հանձնման ակտերով, որտեղ ընդհանուր առմամբ նշված է, թե ինչ քանակությամբ և գնով ախտորոշիչ է հանձնվում: Նշված գործընթացի վերաբերյալ որևէ այլ իրավական ակտ չի կազմվել: Այսինքն, բացակայում է այն իրավական ակտը, որով պետք է սահմանվի հանձնվող ախտորոշիչի նպատակը, հանձնողի և ընդունողի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ընդունող կողմի հաշվետվողականությունը՝ ամրագրելով</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

	<p>օգտագործվող հակաձնի միջին չափաքանակի հարաբերակցությամբ որոշվել է թերակատարված փորձաքննությունների քանակը, որը կազմում է 92,751: Հետևաբար, փորձաքննության դիմաց ՀԱԲԼԾԿ-ին վճարվող գումարը խեղաթյուրված է 29,883.44 հազ. դրամ:</p>		<p>հաշվետվությունների կազմման ձևաչափը և ներկայացման ժամկետները: ՊՈԱԿ-ը հաշվետվությունները ներկայացրել է սեփական նախաձեռնությամբ մշակված ձևաչափով, որոնք ընդունվել են Նախարարության կողմից:</p> <p>Հաշվետվությունների առկա ձևաչափը թույլ չի տալիս ՊՈԱԿ-ի մարզային կառույցների կողմից հետ վերադարձված ախտորոշիչը մուտքագրել հաշվետվության «Մուտք» սունյակում, քանի որ դա Նախարարության կողմից դիտարկվում է որպես ախտորոշիչի ձեռքբերում և անհամապատասխանություններ է առաջացնում Նախարարության հաշվառման տվյալներում: Դա է պատճառը, որ ՊՈԱԿ-ի Տավուշի և Կոտայքի մարզային կառույցներից հետ վերադարձված ախտորոշիչները չեն ներառվել (մուտքագրվել) պահեստի շարժի հաշվետվություններում:</p>	
<p>23</p>	<p>ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2020թ. դրությամբ տարեվերջյան գույքագրում չի իրականացվել:</p> <p>Հաշվեքննության ընթացքում, կենտրոնական պահեստում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հատկացված ախտորոշիչների /հիմնականում Ռոզ-Բենգալ հակաձնի/ 08.04.2021թ. դրությամբ գույքագրում:</p> <p>Համաձայն ՀԱԲԼԾԿ-ի կենտրոնական պահեստի Ռոզ-Բենգալ հակաձնի շարժի հաշվետվության 31.12.2020թ.</p>	<p>վերացված չէ</p>	<p>Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 08-ի N 2-Ն հրամանի Հավելվածի 5-րդ կետի 1) ենթակետի կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները ենթակա են պարտադիր գույքագրման տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելուց առաջ՝ հոկտեմբերի 01-ից ոչ շուտ: Սակայն ՊՈԱԿ-ի կողմից գույքագրման իրականացումը վերոնշյալ իրավական ակտի դրույթների</p>	<p>Հարցը կուսումնասիրվի հաջորդ հաշվեքննության ընթացքում:</p>

<p>դրությամբ 2018թ. ձեռք բերված հակաձնի մնացորդը կազմել է 1982.53 մլ., իսկ 2019թ. ձեռքբերվածից հակաձնի չբաշխված մնացորդը կազմել է 1890 մլ.:</p> <p>Ըստ ժամկետանց ախտորոշի հանձնման-ընդունման ակտերի Կոտայքի մարզային կառույցից 06.08.2020թ. վերադարձվել է 2018թ. ձեռք բերված ժամկետանց 480 մլ. հակաձինը, որը չի արտացոլվել որպես մուտք կենտրոնական պահեստ:</p> <p>02.04.2020թ. Տավուշի մարզից հետ է վերադարձվել 130 մլ հակաձին, որի պիտանելիության ժամկետը լրանում էր 01.07.2020թ. /վերադարձվել է երեք ամիս շուտ/, որը նույնպես չի արտացոլվել որպես մուտք կենտրոնական պահեստ:</p> <p>16.03.2021թ. Արագածոտնի տարածքային ստորաբաժանումից հետ է վերադարձվել 222.335 մլ 2019թ. ձեռք բերված հակաձնից:</p> <p>06.04.2021թ Կոտայքի մարզային ստորաբաժանումից հետ է վերադարձվել ` 300 մլ 2019թ. ձեռք բերված հակաձնից:</p> <p>Հետևաբար ճշգրտված հաշվապահական մնացորդը գույքագրման պահին, ըստ ճշգրտված հաշվապահական մնացորդը կենտրոնական պահեստում 2018թ. ձեռքբերված հակաձնից ժամկետանց հակաձնի քանակը պետք է լիներ 2,462.53 մլ. հակաձին /1,982.53+480/, սակայն գույքգրվել է 3,460 մլ. հակաձին, այսինքն 998</p>		<p>համապատասխան հնարավոր չի եղել՝ պայմանավորված համավարակով և ՀՀ-ում ռազմական դրությամբ:</p> <p>(սննդամթերքի անվտանգության վարչություն)</p>	
---	--	---	--

<p>մլ. ավելցուկ:</p> <p>Ճշգրտված հաշվապահական մնացորդը գույքագրման պահին, ըստ հաշվետվությունների և ընդունման-հանձնման ակտերի կենտրոնական պահեստում 2019թ. ձեռքբերված հակաձնից ժամկետանց հակաձնի քանակը պետք է լիներ՝ 2,542.335 մլ /1,890+130+222.335+300/, մինչդեռ փաստացի գույքագրվել է 3,340 մլ. հակաձին, այսինքն 797.665 մլ ավելցուկ:</p>			
--	--	--	--

7 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հետամուտ լինել Հիմնադրամի կողմից կազմակերպվող գնումների գործընթացին:
- ԳԾԿ-ի կողմից անասնաբույժների հետ առանց մրցույթի կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ առաջացած անհամապատասխանության հարցով վերջնական լուծումը իրականացնել օրենսդրական փոփոխությունների միջոցով:
- Հակահամաճարակային միջոցառումների արդյունավետ և պատվաստանյութերի ջերմային ռեժիմների ճիշտ պահպանման համար անասնաբույժներին ապահովել համապատասխան սառնարանային սարքավորումներով:
- Փաստաթղթավորել ՀՀ էկոնոմիկայի նախարարի պարզևատրման մասին հրամանների հիմնավորումները:
- Տրամադրել ԳԾԿ-ի տարածքային համաճարակաբաններին պատվաստանյութերի բաշխման կնիքված և համարակալված մատյաններ, սահմանել պատվաստանյութերի բաշխման կոնկրետ կարգ, որով կաշխատեն բոլոր տարածաշրջաններում:
- Վերանայել Նախարարության և ՀԱԲԼԾԿ-ի միջև կնքված պայմանագրով նախատեսված լաբորատոր փորձաքննությունների համար սահմանված իրական ինքնարժեքը:
- Կատարել ՀԱԲԼԾԿ-ի հաշվետվություններով ներկայացված հակաճնի շարժի և գույքագրման արդյունքների միջև առաջացած տարբերությունների մասով համապատասխան հաշվապահական ձևակերպումներ: